



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄԱՆԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԿԻՐ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

15 ՄԱՐՏ 1910

ԹԻԻ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ կղերք ինչպես պէ՛տ է գործե
Կարիք մը ջուր (Բերքում)
Կանոնք ժողովոյն նեղիկաւորոյ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՐՈՋՆԵՐ.— Դնացե՛ք այսուհետեւ
ԴՐԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.— Յոյն Եկեղեցի
ՄՐՄՈՒՆՋՆԵՐ.— «Տաճար»ի հոգիին՝ հաւաստեալ-
ներու հոգիին
Պատմութիւն Հայ Զայնագրութեան
Բանաստեղծ Ս. Գրոց բնասպանութեան
Ինչպես պէ՛տ է երգել «Փառքի բարձունք»ը
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԲԸ.— Տրտման նօթեր, յուսալից գոր-
ծունեութիւններ
Ս. Սահակ Պարբէր կամ Արշակունեաց թագաւորու-
թեան բարձունք
Դարձ Անառակին (Բերքում)

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
ԱՐՏԱԽԱՋԴ ՎԱՐԴԱՊԵՏ
Ե. Ե. Դ.
ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ
ԱՐԵԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ
ԳԱՐԵԳԻՆ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ
ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ԱՐԲԱՆԱՄ ՔԶ. ԷՊԷԵԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՅԱԿՈԲ Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Remis

Գ/ն 50 փարսյ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒԾԱՆ

Զագմագճար, Յակոբեան խան, Կ. Պոլիս



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

15 ՄԱՐՏ 1910

ԹԻԻ 8

ՀԱՅ ԿՂԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԷ

ԹԵԼԱԴՐՈՂ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿՂԵՐԷՆ

Քաղաքակիրթ երկիրներու զանազան կողմերը գրական, գիտական, բժշկական և այլ ընկերակցութիւններ և համաժողովներ՝ պարբերաբար առիթ կ'ըլլան աշխարհի մեծ Միաքերն իրարու հետ հաղորդակցութեան մէջ դնելու, մարդկութիւնն զբաղեցնող հրատապ խնդիրներու վրայ յառաջ բերելու համար անոնց միջեւ կարծիքի փոխանակութիւններ։ Կրօնքն ու կրօնական հարցերը, իբրեւ գերազանցօրէն շահագրգռական իրողութիւններ՝ զուրկ չպիտի մնային այգալիսի առիթներէ։ Ընդհակառակն անիկա՝ կրօնքը՝ կրնանք ըսել թէ առաջին պատճառներէն մէկն եղած է տարբեր ազգերու, լեզուներու և ցեղերու պատկանող հեղինակաւոր Միաքերն քովէ քով բերելու, խորհրդակցելու համար մարդու հոգեւոր ու բարոյական կեանքը շահագրգռող յաւիտեական խնդիրներու վրայ, ու

միասին փնտռելու համար ճշմարտութիւնը, միակ ու բացարձակ ճշմարտութիւնը։

Թողլով նախաբրիտոնէական դարերը, քրիստոնէական եկեղեցիի Պատմութիւնը մէջտեղն է, ցուցնելու համար թէ ամէն դարերու մէջ եկեղեցական մասնակի թէ «տիեզերական» ժողովներ մեծ գեր խաղացած են Քրիստոսի եկեղեցիին կազմակերպութեան, քրիստոնէական ուղղափառ վարդապետութեանց հաստատման և անոթար պահպանման մէջ։

Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցին ալ, հաւատարիմ աւանդապահ առաջին դարերու աւետարանական ճշմարիտ վարդապետութեանց, մասնակցեր է տիեզերական ժողովներու առաջին երեքին, ցորչափ անոնք եկեղեցիին մէջ Աւետարանի ոգին պահպանումն ունեցած են իրենց խորհրդակցութեանց միակ նըպատակակէտ։ Յետոյ, երբ գերագահութեան տիրապետական ձգտումներ սկսեւ են երեւալ այդ կարգի հաւաքումներու մէջ, Հայ եկեղեցիի երանելի Հայրերը զգուշացեր են մասնակցելու ատոնց՝ չվտանգելու համար

ազգային եկեղեցիի ինքնուրոյնութիւնը, որուն հետ վտանգուած պիտի ըլլար Հայ ազգին ինքնուրոյն գոյութիւնն ալ: Վաղաքական պատճառներ, դարերու ընթացքին մէջ իրերայաջորդահաւոր տագնապններ ևս ստիպեր են Հայութիւնը՝ մինակը կուրծք տալու իր գոյութեան սպառնացող արիւնակի վտանգներու, ու կերպով մը մեկուսացուցեր են զայն:

Բայց այդ մեկուսացումն արգելք չէ եղած իրեն՝ կրօնական ներոյժ կեանքով մ'ապրելու, փարելու իր բազմաչարչար եկեղեցիին, և արհաւիրից օրերու մէջ իսկ մերթ ընդմերթ գումարելու ազգային-եկեղեցական ժողովներ, որոնց կ'պարսիկէին ինչ գեղեցիկ և կանոնաւոր կազմակերպութիւն որ ունինք այսօր ազգային եկեղեցիին մէջ:

Դարերու հալածանքը, սակայն, և քաղաքական սեղմ պայմանները որ մինչեւ մեր օրերը շարունակուեցան և սաստկացան, պատճառ եղան որ վերջի վերջոյ անկարելի դառնան Հայ եկեղեցականներու համագումար ժողովները. և մեծ դժբախտութիւն մ'է որ երկար տարիներէ ի վեր Հայ եկեղեցին իր ներքին կազմակերպութեան վերաբերեալ կարեւոր հարցերու, և ժողովրդեան հոգեւոր և ընկերային կեանքին հետ ամենասերտ առնչութիւն ունեցող հրատապ խընդիրներու վրայ խորհրդակցութեան չէ հրաւիրած իր բարձրաստիճան պաշտօնատարներն և ընդհանուր վարդապետները:

Ընկերային կեանքն ամենաբարդ հանգամանք մը ստացած է հիմա, և ժողովուրդներու իմացական և անտե-

սական բարգաւաճման համար քաղաքակիրթ ազգերու և նոյն իսկ մեր ազգին մէջ տարուած ճիգերը առած են գեղեցիկ արդիւնքներ, իւրաքանչիւր ազգի մէջ կատարուած աշխատութեան գիտակից և լուրջ հանգամանքի աստիճանին համեմատութեամբ: Ուր որ այդ աշխատութիւնը խնամուած ծրագրով մը գործադրուել է, հոն աւելի գեղեցիկ արդիւնքներ տեսնուել են, և ուր որ կանոնաւոր ծրագիր չէ գտնուել, արդիւնքն ալ բազդատարար նուազ զգալի է եղել: Բայց ժողովրդային զարգացման համար տարուած ճիգեր կան միշտ, և բոցարձակ իրողութիւն է որ առաւել կամ նուազ արդիւնքներ ալ դուրս թիւն ունեցած են և կ'ունենան:

Այսպէս է մեր ազգին մէջ ալ, ուր հայ աղայ զարգացման համար պզտիկ ջանքեր չէ որ կ'ըլլան: Իրժեքախտաբար այդ ջանքերուն մէջ մասնակցութեան շատ աննշան բաժին մը ունեցած է ժամանակակից հայ կղերը, և այս պատճառով է որ հայ ժողովուրդն իր առանգական բարեպաշտութենէն կը հեռանայ հեռզհեռէ, յարելով աստիճանաբար սկեպտիկ համոզումներու, որ այնքան աւելի փաստակար են և կործանարար, որքան խախուտ և մակերեւութային է այդ համոզումներուն հիմը:

Հայ կղերը, որուն աստիճանական զարգացումն ալ դժբախտաբար խտտորճակ կերպով կը համեմատի ժողովրդային զարգացման հետ, և որ — ինչպէս նախորդ դրութեան մը մէջ ցաւօր դիտած ենք — ընդհանրապէս մտաւորական մշակութեամբ աւելի վաւ է ժողովուրդէն քան թէ

վեր, իր նուիրական պարտականու-
թեանց չարքին մէջ ունի այդ պարտքն
ալ. — Գաստիարակել ժողովուրդը բա-
րոյական աւողջ կրթութեամբ մը։ Այ-
դարեւ կարեւոր գործ մը, խոշոր պա-
տասխանատուութիւններով լեցուն,
որմէ՝ սակայն՝ հնար չէ խուսափիլ,
առանց թերացած ըլլալու իր պաշ-
տօնին տարրական պարտադրութեանց
մէջ։

Ի՞նչ կերպով կարելի է սակայն
կրթել ժողովուրդը, իր հոգեւոր կեան-
քին մէջ, սիրցնել անոր իր նախնիք-
ներու պահած, պահպանած ու մին-
չեւ մեր օրերը անեղծ պարզութեամբ
մեզի հասցուցած Ս. Եկեղեցին, պաշ-
տելի ընծայել քրիստոնէական կրօնքը,
կրօնքներու ամէնէն ընկերվարականը։
Այո՛, ի՞նչ կերպով հնար է ի գլուխ
հանել այդ ստիպողական գործը։
Դժուարին հարցում, ներկայ չըջանին
մէջ, երբ ժողովուրդին ուժացման դէմ
առ դէմ կը գտնուի հայ եկեղեցա-
կանութեան ըստ մեծի մասին անհոգ
անփութութիւնը։

Եւ սակայն, եթէ անհատապէս
անկարող կ'ըլլանք որոշ և համոզիչ
պատասխան մը տալու այդ հարցու-
մին, վստահ ենք թէ նոյն անստոյգ-
վարանումը չպիտի տիրէր հայ եկե-
ղեցականներու ընդհանուր ժողովի մը
մէջ։ Թեր ու դէմ կարծիքներ պիտի
յայտնուէին թերեւս, ու պահ մը լուրջ
ընդհարումներ պիտի ծագէին գա-
ղափարներու, դործադրութիւնք այս
կամ այն միջոցին ազդուութեան կամ
օգտակարութեան աստիճանին վրայ.
Բայց վերջապէս ամէն դեռ առաւել կամ
նուազ գործադրելի միջոց մը պիտի
ուզէր ցուցնել, որոնց մէկը կամ միւ-
սը կամ մէկ քանին միասին պիտի

աշխատուէր գործադրութեան դնել,
ի շինութիւն այն ժողովուրդին որուն
մէկ մասը կը կազմէ ինքը՝ հայ հո-
գեւորականն ալ, որուն ցաւերն ու
վիշտերը իրե՛նը պէտք է ըլլան, որուն
ուրախութեանց մասնակցութեան ի-
րաւունքն ունի միշտ, որուն միսին ու
սակորին անբաժան մէկ կտորը պէտք
է նկատէ ինքզինքը՝ հայ կղերը։

Պէտք է կաղմակերպուի, ուրեմն,
հայ եկեղեցականութիւնը, պէտք է
միացած քաջ, ինչպէս կը գրէինք
Տաճարի Ե. Թիւին մէջ հրատարակ-
ուած գրութեամբ մը։ Թուրքիոյ ա-
զատագրութեան գեղեցիկ շրջանին
մէջ, միակ դասակարգը որ ցարդ օ-
գուտ չքաղեց այդ ազատագրութեան
ընծայած բազմադիմի առաւելութիւն-
ներէն, հոգեւորականութիւնն եղած
է, որ չկազմեց տակաւին ընդհանուր
եկեղեցական Միութիւն մը, հիմնական
նպատակ ունենալով, փնտռել լաւա-
գոյն միջոց մը՝ ժողովրդեան կրօնա-
կան մարած եռանդն արծարծելու, և
այդ հիմնական նպատակին յարակից՝
ուրիշ նպատակ մը, այն է եկեղեցա-
կանաց իմացական մակարդակին՝ նաև
նիւթական վիճակին՝ բարելաւումը։

Ինչ որ անհատ մը գուցէ անկա-
րող պիտի ըլլար յաջողցնել մինակը,
իր բոլոր բարի կամեցողութեամբ հան-
գերձ, նոյնը շատ աւելի դիւրութեամբ
կրնայ գլուխ հանել միացեալ Մարմին
մը, գործելու իր լայն միջոցներով,
անհատական ուժերու հաւաքումով,
գաղափարներու զուգակցութիւնով։

Այս պահուս աչքի առջեւ ունիմ
նկարագրութիւնն Անգլիոյ և Սկոտ-
տիոյ կրօնական Միաբանութեանց տա-
րեկան հաւաքոյթին, որ տեղի ունե-
ցաւ վերջերս Շէֆիլտի մէջ (Անգլիա),

ուր այդ երկրի բոլոր օժտուած եկեղեցականները՝ եպիսկոպոսներ, պատուելիներ, բրօֆէսէօրներ, քրիստոնէական ջերմ սիրով մը առգորուած, նաև ճշմարիտ գիտութեան լոյսով լուսաւորուած, կուգային ի սպաս դրնել իրենց Միտրի զարգացումը, իրենց գործելու եռանդն ու կարողութիւնը, ի նպատակ ամենաբարձր գաղափարականի մը, այն է քրիստոնէական լոյսի ծաւալումը ժողովրդային խաւերու մէջ, Ս. Գրքին և մասնաւորապէս Ս. Աւետարանի յաւիտենական, փրկարար ճշմարտութեանց ծանօթացումը ամենէն խոնարհ մտքերուն, որով միայն կարելի պիտի ըլլար ցոյցնել ոչնչութիւնը, խախտու հանդամանքն այն բոլոր առարկութիւններուն, որ կ'ըլլան միշտ գիտութիւններու կողմէ՝ ընդդէմ եկեղեցիին և անոր յաւիտենական ճշմարտութեանց:

Անգլիոյ ընկերային, ընտանեկան ու բարոյական կեանքին հետ ամենասերտ յարաբերութիւն ունեցող ինգլիսներ ծեծուեցան այդ հաւաքոյթին մէջ, որ քանի մը օր շարունակուեցաւ ի Շէֆիլտ: Խորհուրեցաւ այն միջոցներուն վրայ զորս անհրաժեշտ է ի գործ դնել՝ աշխատաւոր դասակարգի նիւթականը բարելաւելու, և զայն Քրիստոսի ուղղակի ազդեցութեանը տակ բերելու և պահելու համար: Ուժգին բանախօսութիւններ տեղի ունեցան Արգիակա նութեան շուրջը, և Քրիստոնէական գիտութիւնը ուսումնասիրուեցաւ՝ իր ունեցած օգտակարութեան տեսակէտով: Լուրջ և հիւժեղ բանախօսութիւններ արտասանուեցան եկեղեցիին, Ս. Գրքին և Յիսուսի վրայ, ծանրանալով մանաւանդ սա կէտին

վրայ, թէ ի՞նչ պէտք է ըլլայ Ս. Գրքի դիրքը եկեղեցիին մէջ, հաստատուելով Քրիստոսի Աստուածութիւնը՝ իբրեւ վճռական, ապացուցուած ճշմարտութիւն, և սրտայոյզ, համոզուած հաւատքի ներշնչումներով ոգեւորելով բոլոր հաւատացեալները: Այդ հաւաքոյթին մէջ շնորհակալութիւններ, շնորհաւորութիւններ կը քուէարկուէին աշխարհի միւս ծայրերը, մինչեւ Հնդկաստան, մինչեւ Չինաստանի խորերն երթալու պատրաստուող միսիօնարներու, որ ճշմարիտ կրօնքի ծաւալման համար յօժարակամ, հաճոյքով կը զոհէին իրենց հանգստութիւնը:

Կրօնական տրիշ համաժողովի մը արձագանգը կուգայ նաև Ամերիկայէն, ուր տարւոյս առաջին օրերուն, Օհայոյի մէջ գումարուեցաւ Միջազգային Ուսանողական Կամաւորներու վեցերորդ Համաժողովը, նոյնքան կարեւոր, որքան քիչ ժամանակ առաջ Անգլիոյ մէջ գումարուածը: Այդ ուսանողական շարժումը որ քառորդ դարու հնութիւն ունի, սկսած է ծաւալիլ քրիստոնէոյ ազդեցութեան ամենաբարձր Հաստատութիւններուն մէջ, նպատակ ունենալով «Քրիստոսի Աւետարանը քարոզել աշխարհի, ներկայ սերնդեան օրով»: Համաժողովին ջանքն էր Քանաուայի և Մ. Նահանգաց Համալսարաններու և Քօլէժներու ուսանողներն ու բրօֆէսէօրները, նաև միսիօնարներն ի մի բերել, խորհրդակցելու համար միսիօնարական գործառնութեանց վրայ, և միասին քննելով քրիստոնէութիւնը ծաւալելու կենսական հարցն և անոր յարակից խոչնդոսները, եռանդ ու նէր արծարծել ուսանողներու մէջ դէպի Քրիստոնէութիւն:

Ստուգիւ հոյակապ էր այն ար-
դիւնքը զոր ունեցաւ Համաժողովը՝ ի
մի հաւաքելով ուսանող և ուսուցիչ
3700ի մօտ անհատներ, որ կը ներ-
կայացնէին 700է աւելի համալսա-
րաններ և բրոֆէսէօրներ։ Սրտապըն-
դող էր մանաւանդ տեսնել նոր Աշ-
խարհի այս համախումբ մտաւորական-
ներու քով «կրօնական ջերմ եռանդն
ու ոգեւորութիւնը — ինչպէս» կը գրէ
ամերիկահայ թերթ մը, որմէ կը քա-
ղենք այս տեղեկութիւնները — որ կոր-
ծանարար հերքում մ'էր ընթացիկ
այն սին դադափարին դէմ, թէ դի-
տուներն տնկածն կ'ըլլան և հաւատ-
քը գործ չունի կրթական բարձր
հաստատութիւններէ ներս»։

Համաժողովին հնգօրեայ տեւողու-
թեան միջոցին, օրն երկու անգամ
6000է աւելի ունկնդիրներ հեքոտ
հետաքրքրութեամբ մը կը լսէին մի-
ջազգային առևտրական, համալսարա-
նական, կրօնական դատաւարներէ
հզօր անհատականութիւններու յնցող,
հոյեցող բանախօսութիւնները, որով
անոնք ի վեր կը հանէին աշխարհի
ներկայ բարոյական և հոգեւոր կա-
րօտութիւնը, և այն լուրջ պատաս-
խանատուութիւնը, որ կը ծանրանայ
քրիստոնեայ կրթական հաստատու-
թեանց և անոնց մէջ դատաւարակ-
ուող ուսանողներու վրայ։

Բանախօսներուն մէջ կը փայլէր
Ուաշինկիդէնի Անգլիական դեոպան
Մր. Ճէյմս Պրայս, ծանօթ՝ իր հոյա-
սիրութեամբ և հեղինակ Վերեյֆ յԱ-
րստաս գործին, որ այս առթիւ կու
գար «նազովրեցի Յիսուսին դեոպա-
նութիւն ընելու»։ Այս հռչակաւոր
անձնաւորութիւնը, որ իբր յիւանս-
գէտ ուսուցիչ և հեղինակաւոր միւր,

քանիցս պատուուած է Եւրոպայի և
Ամերիկայի կարեւոր համալսարաննե-
րէ, բուն և ոգեւորեալ ծափերու
մէջ ազդու կոչ մ'ուղղեց երիտասարդ
համալսարանականներուն, ճանչնալու
իրենց պարտականութիւնը՝ տառապ-
եալ մարդկութեան հանդէպ, և Ա-
ւետարանի պատգամը տարածելու
երկրին շատ մը մասերը, որ միջու-
նաւոր մարդիկ մութի մէջ կը խար-
խարհի վրայ երեւումէն 2000 տարի
հոքը կ'ապրին անոնք։ Նկարագրեց
թէ ճիշտ այն վճռական և միտնգու-
մայն բարեգուշակ վայրկեանին, երբ
արեւմտեան քաղաքակրթութիւնը կը
խորտակէ տգէտ, անքաղաքակիրթ ժո-
ղովուրդներու հին բուրքերն ու նա-
խապաշարումները, հաւատալիքներն ու
խեղճ ու կրակ բարոյականը, մեծ ա-
ղէտ մը պիտի ըլլայ եթէ այդ թե-
րակիրթ ցեղերը զուտ նիւթական
կեանքով մը ապրին, և զուրկ մնան
բարեպաշտութեան զգացումէ և ճշ-
մարիտ կրօնքի մը երկրպագելու փա-
փաքէն։ Յաւալին այն է որ ասոնք,
այդ տգէտ ժողովուրդները, աւած
են քրիստոնէութեան մասին այնպիսի
աննպաստ տպաւորութիւններ, զորս
հազար անգամ լաւագոյն էր՝ եթէ
բնաւ ստացած չըլլային։ Քրիստոնէու-
թիւնն յաճախ եկած է անոնց՝ իբր
կրօնքը բախտախնդիրներու, որ Քրիս-
տոնեայ անունը կրելով, զանոնք զըր-
կած են իրենց ստացուածքներէն, չա-
հազարժած են անոնց աշխատութիւ-
նը, կործանած են զանոնք՝ ոգելից
ըմպելիներով և երբեմն շատ կոշտ և
անարանաբար վարուած են անոնց հետ։
Այդ կարգի մարդիկ զիրան են քա-
ղաքակրթութեան, և իրենց կեանքե-

րով քակած ու քայքայած են ինչ որ Քրիստոնէութիւնը կը սորվեցնէ իր բարձր գաղափարականով: Դժուար է անշուշտ այդպիսիներն հեռու պահել նոյն երկիրներէն. բայց առնոց ներկայութիւնն աւելի կը շեշտէ Քրիստոնէութեան ծաւալման պէտքն այդ երկիրներուն մէջ: Եկած է վայրկեանն որ Աւետարանը հասնի անոնց, թէ՛ իբր բարոյական ուժ մը՝ զիրենք նւաաստացումէ փրկող, և թէ իբր կրօնք մը որ տալով բարձր և մաքուր բարոյական մը և Աստուծոյ ու մարդկութեան մասին բարձրագոյն գաղափարական մը, պիտի բարձրացնէ զանոնք, և կամուրջ մը պիտի ըլլայ իրենց և քաղաքակրթեալ ազգերու միջեւ գտնուած անջրպետին: Պիտի սորվին ճանչնալու թէ Քրիստոնէութիւնն Աստուծոյ պատուէրն է, հանուր մարդկութիւնը միացնող: Աւետարանը ոչ միայն լոյս պիտի տայ անոնց որ խաւարի մէջ են, այլ պիտի ստեղծէ եղբայրութեան կապ մը՝ իրենց և մեր միջեւ, մենք որ անոնց կը սորվեցնենք թէ ամէնքն ալ Աստուծոյ զաւակներն են: «Պէտքը հիմակ է, այս թանկագին ու վճռական պահուն: Առաջի Աստուծոյ մենք պատասխանատու չե՞նք միթէ առաջնորդելու և օգնելու այս ժողովուրդներուն, որոնց ճակատագիրը մեր ձեռքն ունինք»:

Այստեղ կանգ կ'առնենք: Մր. Ճէյմս Պրայս ուրիշ շատ գեղեցիկ յորդորներ ուղղած է համալսարանական և դիտնական դասակարգին, իրենց պարտականութեանց վրայ: Բայց արուած ամփոփումը բաւական է ճշգրիտ գաղափար մը կաղմբելու

երկու կարեւոր կէտերու վրայ. այն է թէ՛ առաջին՝ կրօնի դէմ՝ արհամարհանքը, հիմակ այնքան սովորական հայ շրջանակներու մէջ, իբրեւ խորհրդանիշ մը ազատամտութեան և «գիտնականութեան», յարգ չունի քաղաքակրթուած երկիրներու մտաւորական և քաղաքական ամենաբարձր շրջանակներուն մէջ, և երկրորդ՝ թէ կրօնքը ներքի չէ նկատել լոկ մարդուս յաւիտենական կեանքին հետ կապ ունեցող վերացական հարց մը, այլ անիկա մեծ դեր ունեցած է և ունի միշտ մարդկութեան ընտանեկան, ընկերային, իմացական կեանքի բարելաւումին մէջ:

Հետեւապէս, կրօնի պաշտօնեաները, ստուգիւ «առաջի Աստուծոյ պատասխանատու են առաջնորդելու և օգնելու այն ժողովուրդներուն, որոնց ճակատագիրն իրենց ձեռքին մէջ ունին», ինչպէս բացայայտօրէն կը շեշտէ Մր. Ճէյմս Պրայս:

Հայ կղեր, ունի՞ս այդ պատասխանատուութեան գիտակցութիւնը: Մասնաւորապէս, Պոլսոյ և զաւառի հայ քահանայ եղբայրներ, ունի՞նք գիտակցութիւնը այն մեծ պաշտօնին որուն անթերի կատարումն ուխտեր ենք Աստուծոյ սուրբ սեղանին առջև: Ամէն ճոխութեամբ լիացած Եւրոպացիներ և Ամերիկացիներ՝ յօժարակամ կը նետուին աշխարհի ամէնէն հեռւոր, մթին և անհամակիր երկիրներուն և շրջանակներուն մէջ, ծաւալելու ճշմարիտ կրօնքի լոյսը, և սիրով պատրաստ կը գտնուին զոհելու իրենց անձնական հանգիստն ու կեանքը նոյն իսկ: Հակադրութիւնն աչքառու է անոնց ու մեր միջեւ: Անոնք՝ տակաւին անբաղաժանիր իրարմանօթ

յեզեր քրիստոնէական զգացումներով
կրթելու գերագոյն անձնութիւնը
կ'ընդգրկեն սիրով, իսկ մենք՝ մեր
սառապեալ ցեղակիցներուն տուայ-
տանքին իսկ անգէտ կ'ուզենք ձեւա-
նալ, երբ ասոր ի գործն ամէնէն
պզտիկ զոհողութիւն մը պահանջուի
մեզմէ: Ոչո՞նք միշտ հո՞ն ենուր պէտք
մը կայ, իսկ մենք այնտեղ՝ ուր հան-
գիստ կայ:

Իրաւ է որ մեր պարտականու-
թեան բարձրութեան մէջ գտնուելու
միջոցները չէ սուած մեզ հայ ժողո-
վորդը: Բայց ասիկա չի կրնար բո-
լորովին արգարացնել զմեզ: Մենք ալ
պարտաւոր ենք միջոցներ խորհիլ,
նախ ժողովուրդին պէտքերն ու պա-
հանջները ճանչալու, ստուգելու, և
քիտայ այդ պէտքերը գոհացնելու ջանքն
ի գործ զնել: Եւ ասիկա կարելի կ'ըլլայ
կազմակերպուելով, եկեղեցական լուրջ
Միութիւն մը կազմելով, միացնելով
անջատ կարողութիւններն, և միտքի,
բարոյականի և նիւթականի ուժերը,
որ ոչինչ կ'արժեն անջատաբար: Երկ-
րորդ սիրալիր հրաւէր մ'է զոր կ'ուզ-
ղենք այսօր, ընդհանուր եկեղեցական
հայրերուն և մասնաւորապէս հայ քա-
հանաներուն, և կը յուսանք որ անա-
պատի մէջ ձայն մը չի մնար ան:

Ցանարը, իր ներկայ համեռու
գիրքով, ապացոյց մ'է թէ բարի կա-
մեցողութիւններու միացումը շատ զե-
ղեցիկ արգիւնքներ կրնայ առլ: Ուս-
մանափակ թիւով վարդապետ և քա-
հանայ Հոյրերու գրեթէ պատահա-
բար կատարած հաւաքոյթն և խոր-
հրդակցութիւնը մէջաեղ հանեց ներ-
կայ կրօնաթերթը, որ՝ ամէն ձեւ-
նարկի նման՝ հետզհետէ կ'աւարեւա-
գործուելով պիտի կրնայ ըլլալ կա-

րեւոր ազգակ մը կրօնասիրութեան
ծաւալման: Բայց մի միայն կրօնա-
թերթը չէ բաւական լիովին իրազոր-
ծելու առաջադրուած ազնիւ նպատա-
կը: անհրաժեշտ է ուրիշ միջոցներ
խորհիլ ժողովրդեան կրօնական զար-
գացման, և ասիկա կ'ըլլայ կանոնա-
ւոր կազմակերպութիւն ունեցող Մի-
ութեան մը պարբերական գումա-
րումներով:

Սպասե՛նք, յուսա՛նք:

ԶԱՐԿԱՅՐ ՔԱԶԱՆԱՅ

ԿԱՔԻՆ ՄԵ ԶՈՒՐ...

Կաքի մը ջուր, Ասուած, տ'ը, կաքի մը ջուր
Հոսեցուր
Սիրոյ ծովէն շայնածուփ՝ սրտի ծոցերն
Բոցաւեր...:
Սրտի ծոցերն բոցաւեր ցաւ մը կ'երի
Կապարի,
Որ չը հաշիւ, չը հաշիւ, գէթ չը պաշիւ
Սառնալիք...:
Կատօսի կրօն մ'ի բռնկած՝ քե վիշտ ու ծգիւ
Զրկանիք,
Սիրոյ պապական և տոյր, ծառան վրձիս
Ակնարկի,
Թե հայուածիք շանթն ահեղ որ ովստիս
Հոգիիս
Դուս մ'առնի պէս կ'այր...: Ա՛խ պոս մը ջուր,
Ասուած, տ'ը...
Շաւ արցունքներ կու տուի, արցունք աղի
Ու շիւի,
Ալ անոն, ա՛հ, չը կրցիւ մարել դժգոհ
Այդ կրքի,
Ինչպէս ծովերն՝ անգունդի հրաքիւտի
Դաւարեցին...:
Միկէ տու սիրոյ շայնածուփ ծովէն կաքի
Մ'իկէ կաքի
Թե հնար ըլլար, Ասուած իմ, սիրտ ալ ընդհուպ
Այնծուփ՝
Կը ծովանաւ կենսալիւ, կը զովահար
Փրկալիւ
Ծփանիքն սակ ծով սիրոյ. կ'ըմպէր առաւ
Անարաւ
Ուղիս արքունիքի քաժակի, ու կենսաւեր
Ինչ վերիւ,
Ինչ փոփոքներ բոցածիւ կը մարեին
Անդաւի...:
Օ՛ն, կաքի մը, ա՛խ, Ասուած, կաքի մը ջուր
Հոսեցուր
Սիրոյ ծովէն շայնածուփ՝ սրտի ծոցերն
Բոցաւեր...:
Եւրոպիա ԱՐՏԱԽԱԶԴ ՎԱՐԴԱՊԵՏ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա - Ի Ր Ա Ի Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԿԱՆՈՆԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԵՈԿԵՍԱՐԻՈՅ (Ի ՄԻՋՈՑԻ ԱՄՍՆՅ 314—325)

1.— Երեց այր թե ամուսնով իցե ընդունելի ե ի կարգ ⁽¹⁾, ապա թէ պսոնկեացի կամ չնայցէ, մերժել արժան է զայն պիտին ամենեւին, և ամել յապաշխարութիւն:

2.— Կին թէ լինիցի երկուց եղբարց՝ մերժեսցի մինչեւ ի մահն իւր. բայց՝ եթէ ի վտանգի մահուն խոտտացի յողջանալն արձակել զամուսին իւր՝ ապաշխարութիւն ընկալցի յազազս մարդասիրութեան. իսկ եթէ մեռանիցի կինն այն մինչ ի զուգութեանն իցէ, կամ այլն նորա, մնացելուին զժուարին լիցի ապաշխարութիւնն:

3.— Վասն ըմբռնելոցն ի բազում ամուսնութիւնս՝ յայտնի իսկ է ժամանակն՝ զոր սահմանեցաք. այլ դարձ նոցա և հաւատն կարճէ զժամանակն:

4.— Եթէ ոք ի մտի ցանկացաւ ընդ կնոջ ումք առ ի ննջել ընդ նմա, և խափանեցաւ գործ ցանկութեանն, յայտ է թէ ի չնորհաց անտի պահեցաւ:

5.— Երաշայ ոք որ յեկեղեցի մուծեալ յերախայից կարգի կացցէ և ի մեղս անկանիցի, եթէ ի ծնրադրողաց իցէ ընդ ունկընդիւրս կացցէ՝ ո՛չ ևս մեղանշելով. ապա թէ մինչդեռ ի դրունս ունկնդրութեանն իցէ՝ և դարձեալ ի յանցանս գտանիցի՝ ամենեւին մերժեսցի:

6.— Վասն յղի կանանց՝ արժան է մկրտել յորժամ և կամիցին, զի ո՛չ յայս պիտի լնչ հաւատարեալ է ծնողն ընդ ծնողեանն. զի կողմն իւրաքանչիւր զյօժարութիւն իւրեանց (ի մկրտութիւն) խոտտովանութեամբ ցուցցին:

(¹) Հայերէն կանոնագրի թնագիրն իր նշանութեամբը պահեցին հոս, թեւ Յունարէն թնագիրը տարբեր իմաստ ունի—«Երեց ոք թե ամուսնացի՝ մերժեսցի ի կարգեան...»:

7.— Չէ՛ պարտ երիցաւ երթալ ի հարսանիս այնոցիկ՝ որ երկրորդ կին աննն իւրեանց, և ուտել հաց (ընդ նոսա): Չի յորժամ ապաշխարութիւն խնդրիցէ այր երկկին ⁽¹⁾, ո՞ր այն քահանայ իցէ՝ որ վասն հացին հաճեսցի ընդ հարսանիսն:

8.— ⁽²⁾ Կին աշխարհականի ուրուք եթէ չնացի և իրքն յանդիմանեցին, աշխարհն ոչ կարէ ի քահանայութիւն մերձենալ. իսկ եթէ յես ձեռնադրութեան չնացէ կինն՝ արձակեսցի: Եթէ ամեն կամք իցեն կեալ ընդ կնոջն, ո՛չ կարասցէ կալ նմալ ի պաշտամանն՝ որ յանձն եղել նմա:

9.— ⁽³⁾ Քահանայ որ յառաջ քան զքահանայութիւնն մեղուցեալ է մարմնով, և խոտտովան լիցի եթէ նախ քան զձեռնադրութիւնն մեղաւ՝ մի՛ մատուցէ պատարագ, յայլ ամենայն գործս պաշտամանն կալով՝ եթէ փոյթ եռանդեանն իցէ ի նմա. զի ամենայն մեղք (բայ ի բղձախոհութենէ) ըստ ասելոյ բազմաց, քաւեսցին ձեռնադրութեամբ. ապա թէ ո՛չ խոտտովանեսցի և անհար լիցի յանդիմանել զիրան, ի կամս նորա թողցի լինել կամ չլինել յիշխանութեանն (զպատարագ մատուցանելոյ ?):

10.— ⁽⁴⁾ Նոյնպէս և սարկաւադ՝ եթէ ի նոյն մեղս անկանիցի՝ զկարգ սպասաւորի (հիւպերէս) միայն կալցի:

11.— ⁽⁵⁾ Մի՛ ոք ձեռնադրեսցի երեց մինչչեւ երեսուն ամաց լեալ, թէ իսկ ամենեւեմբ համարեսցի այր արժանի. այլ փորձեսցի, զի Տէրն մեր Յիսուս Քրիստոս

(¹) Երկրորդ ամուսնութիւն կնկողներու մասին հայ քաղաքական իրաւաբանութիւնն աւելցուցած է. «Բ. ամ առ դրանն հաւատարի աւոթից եւ Ա. ամ մեկալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարոյս եւ ի ձեռն տոց ողորմութեան հաղորդեսցի օրինաց»:

(²) ԺԴ. կանոն հայ կանոնագրին մէջ:

(³) ԺԴ. կանոն, հայ կանոնագրին մէջ

(⁴) ԺԵ. » » » »

(⁵) ԺԶ. » » » »

երեւմտամայ էր յորժամ մկրտեցան (ըստ հայ. թարգմ. «առ զօծումն մկրտութեան») և սկսաւ ուսուցանել :

12. — (1) Եթէ ոք ի խիստ հիւանդութիւն ըմբռնեալ մկրտեցի՝ ոչ կարէ մերձենալ ի քահանայութիւն—զի ո՛չ ընտրութենէ կամաց են հաւատք նորա՝ այլ ի հարկէ—, բայց եթէ յետ ոյնորիկ ցուցցէ եռանդն և հաւատս և պակասեցին արք (յարմարագոյք ի կոչումն) :

13. — Գաւառի երիցունք (գիւղական քահանայք) յեկեղեցւոջ քաղաքի ո՛չ կուրացեն մատուցանել պատարազ յորժամ

եպիսկոպոսն անդ իցէ կամ երիցունք քաղաքին, և ո՛չ տալ հայ (սգապի) օրհնութեամբ կամ բաժակ. ապա եթէ նոքա չլինիցին անդ՝ ինքեանք կոչեացին ի սուրբ պաշտօնն և տացեն :

14. — Գորեպիսկոպոսունք ըստ օրինակի եօթամանիցն (աշակերտաց) են իբրև պաշտօնակիցք պատուեալք վասն փութոյն առ աղքատս զընծայսն տանելոյ :

15. — Եօթն սարկաւաղաց պէտք են ըստ կանոնի, եթէ ընդարձակ իցէ քաղաքն, յայդ հաւանեցուցեն զքեզ Գիրք Գործոցն (Առաքելոց) (1) : Ե. Ե. Դ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՐՈՋՆԵՐ

«ԳՆԱՑԷ՛Ք ԱՅՍՈՒՀԵՏԵԻ

«աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ» ՄԱՏԹ. ԻԲ. 19:

Ք.

Կարդա՛, Հայ Ժողովուրդ, նախնիքներուդ բարօրը ու հարուստ կեանքի, կենցաղի ճոխութիւնները, իմացիր անոնց կալին ու կոթքին շտեմարաններու առատութիւնը, ագարակներու համրանքը, շէներու թիւերը, անտառներու շարքը, հիւրատուններու սրչափութիւնը, պէրատուններու անթուելիութիւնը, գոմատներու հարստութիւնը : Աւագի չափ օճախներ, տնապատներու հանգոյն երգիքներ, հօտաղներ ու հօտեր, նախրեր ու նախրապաններ լեռներն ու արօտավայրերը լեցուցեր էին : Հօպա նժոյգ ու առոյգ վրնջողները, ուրոնք քու կտրիճ պապերուդ քաջութիւններու վկաներն էին, անոնց սարուածքները նախարարական, իսկ շարքերը Ասքանազեան : Կարդա՛, Սուրբ Գիրքը ու այդ զնդին անմոռաց յիշատակութիւնը. քալէ

(1) ԺԵ. կանոն, հայ կանոնագրին մէջ :

մինչեւ հոն ուր քու պապերդ ստրուկ չէին ծնած. ու մամուրդ օտարին կանանոցին չէին գիտակ, և քու քոյրերդ վայրագ վարդնեմու լրբերի ու յայրատ նայուածքներու չէին ստրված, երբ աշակերտած էին ճշմարիտ Բանին ու անկէ մկրտուած ու ներշնչուած, երբ՝ անոնք սուռն ու ընտանիք, կեանք ու կենցաղ սիրով էին հիմնաւորած, գործ ու գործառնութիւն արդարութիւնով շաղախած, երբ անոնք գիւղ ու քաղաք, Սկզբ ու Հայրենիք իմաստութիւնով կը վարէին :

Հա՛յ Ժողովուրդ, Յիսուսի «Գնացէ՛ք»ը երբեք մի մոռնար : Ա՛ն դարերու մէջէն քեզի կ'ակնարկէ. քալէ՛ և անդադրում, մինչեւ հե-

(1) Նեոկեսարիոյ Ժողովին կանոնները 15 եւ քուով ըստ բնագրին, իսկ հայ կանոնագիրք ունին 20 կանոններ : Այդ 5 աւելի կանոնները (Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԲ.) կը խօսին երրորդ եւ աւելի ամուսնութեանց, եւ ամուսնալուծման մասին : Նշանակութեան արժանի է ԺԱ. կանոնը. «Եթէ արձակեցի ո՛ր զկին իւր վասն բանի պոռնկութեան կամ վասն այլ շարագործութեան զոր ոչ միայն այրն՝ այլ եւ աշխարհ վկայէ զչար գործոց նորա, արձակեցի՛. ընդունի զնա կանոնս, բայց Ա. ամ ապաշխարեցի, ի ձեռն ողորմութեան սրբեցի եւ հաղորդեցի օրինացն, եւ թէ կամիցի՝ կին արացի, եւ կինն այրու ոչ իշիւ յենդ, մինչ կենդանի է այր նորա» :

ուսները, հորիզոնները և անոր սահմանները, և ուշաբերէ թէ ինչո՞ւ կարճացած ու կտրատած է, ինչո՞ւ ամփոփուած եւ ու սյնչափ պարփակուած: Ժամանակ մը ամբողջ կուլ կուտայիր Միջագետքի սահմաններովը, Պոնտոսի գրկովը, Միջերկրականի եզիրքովը, Պարսկաստանի գոգերովը. բայց հիմա սահմաններովը քիչցած, ու ուժովը թուլցած, հարստութիւնով չքայցած, ինքնութիւնը կարանցուցած, ողջ կենդանութիւնը դիակնուցած, երիտասարդութիւնը մորթատուած, եղբայրութիւնը ջլատուած, աստիւղութիւնը անհամեմատ քայլեր ուռած, քինականորութիւնը կծուացած, ու քանի՜ այսպէս: Գալէ՛, աշակերտի համբերանքով ու ծառայութիւնով, Առաքեալի պարտաւորութիւնով ու պարզութիւնով, և աշակերտեց ուր ամէնքսան դարերու պատկառելի այդ Ս. Գրքին, այդ համայնարւած փանաւէին, անփոխարինելի գանձին, անշխանելի լայսին, անհնանալի ժառանգին, անվերջանալի կրատակին, ինքնածիլ մանանային, անբեկանելի ոյժին, անկորնչելի թումբին, անխորտակելի բերքին, սիրոյ օճախին, ոգատութեան ճանապարհին, հայրենասիրութեան պատմութեանը, ազնուագոյն ու իմաստնագոյն դասին, յեղափոխողի կեանքին, հաւատարութեան օւկանին, տուներու հիւքին, ընտանիքներու սրբութեանը, սիրոյ բուրումին, հաւատքի ողբերին, յոյսերու պոսկումին, խոնարհութեան մարմնացումին, պարկեշտութեան փայտեանին, մեռելներու կեանքին, գիրքերու Գրքին, յաղթականն Յիսուսին:

Հայ ժողովուրդ. ա՛յ պէտք է որ զիսնաս ցաւերուդ լեռնակարկառ գէղերու քանակութիւնը և սոսկալիութիւնը. վերքերուդ ծովու չափ խորունկութեանը և ովկէանացումին, պատուիդ ձորերու չափ պատառուածքին, անցեալիդ սահմակեցուցիչ արեւնոտ, արցունքոտ գերեզմանաշէ պատմութիւնները, ներկայիդ Ասանաջական ահաւի թուականները, ու քսանիւղի, եղբայրատեղիկ պառակտողի վիճակդ, որ բռնապետին գիւային ամէն մտածումներէն, բարբարոսին անզուժ խնեշանքէն ու մորթատուներէն, մուկանդի մա-

հատարտափ սարսուհիներէն ու վրիժառութիւնէն չատ աւելի տւերներ ու սպուլքներ կը ձգէ ետեւդ, ու դեռ ինչ չարիքներ ու ոճիր չպիտի ցուցադրէ...: Ելի՛ր ու կանգնէ քու մահաթմբի կայքէդ, անհարկի վէճերէդ ու վիճարանութիւններէդ, իրար նախատուի ու անուանարկողի դերէդ: Աշակերտի մը պէս ցուպը ձեռքիդ, Առաքեալի մը պէս մախալը ուսիդ՝ նստուէ ժողովուրդիդ ցաւերուն մէջ, ընտանիքիդ քրքրուած բունին գոգը, բարձրացիր սրխալներու ու թերացուհիներու բրգացած աշտարակներուն վրայ. իջի՛ր խորը ցաւած սրտերու, այրած հոգիներուն գիրկը, ուր ըսին ու ոտք դրած են կածկառող վիշտերն ու սուգերը ու նոյնչափ անտեղի կիրքերը, եւ ու դուք, իմա ու քուք անվերջ նախանձախնդրութիւնները: Ա՛յ աշակերտեցուք սրտի հեթանոսութիւնները, ու անմիջապէս մկրտէ յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ճակտին անբռնութիւն դրոշմէ, սրտին անմեղութիւն խաչանշէ, հոգւոյն սրբութիւն. կոնգնեցուք սրտի տաճարները, նորոգէ ու ճարտարապետէ ձեռակերտները, որոնք աղօթքով, խունկով ու օծումով լկրտուած են ու անոնց ճակտին փորագրէ. «Այսու ծանիցեն թէ իմ աշակերտք իցէք, եթէ սիրիցէք զմիմեանս»: Այս երկնային սրտուէրին տիրացիր, որդեգրէ ու աշակերտի՛ր, անոր զօրութեանը իրագել եղիր և ուժով մը թուգաւորեցուք Տաճարիդ նիսը:

Հայ կղկի՛ր. լինիս սարկառազ թէ քահանայ, վարդապետ թէ ծայրագոյն, եպիսկոպոս թէ արք, նախ ու միշտ աշակերտ եւ կենաց Բանին ճշմարտութեան և քարոզիչ, սպասող որ եւ տաճարին ու վերակացու, հովիւ եւ բանաւոր հօտին ու հայր, միջնորդ եւ խաղաղութեան և հակիչ, ու գեռ ո՛րչափ և քանի՜ պարտքեր ունիս ուսիդ ու քանի՜ բազմազան ու զանազան պէտքեր կան աջիդ ու ձախիդ, նոյնչափ ծանր բաժնիներ պատասխանատուութիւնաց: Կարգա՛՛ հին ու նոր Կաթաղարանները և սոսկա՛՛ մանաւանդ նոյն այն ձայնը Յարուցելոյն թուականէն, Յիսուսի յաղթանակէն պատուէրներու չեղտէն. — Գնացէք այսու-

հեպուե... միեւնոյն Աստուածային ձայնն է, յաղթականին պատգամն է, պահանջ ու պարտք և մշտնջենի կամէութիւն: Փութա ընդունելու ու ունկնդրելու աշակերտի օրերէն, Առաքեալի դարերէն ու քու Սըրբազան հայրերուդ թուականներէն եկած պարտաւորութեանց կատարումն ու խոստումն:—Գնացէք, աշակերտեցէք, քարոզեցէք ու մկրտեցէք: Նախ աշակերտի՛ր խոնարհութիւնով ու անպայման, որպէս զի այն ողջ ու ամբողջ ճշմարտութիւններու աշակերտեցնես, նախ մկրտուէ արդարութիւնով, ու այդ պիտի բաւէ լծակ մի ըլլալու՝ աշխարհ մը անիրաւութիւնները վեր վերցնելու, հաստատուէ ու խարսխէ սէրով, որով կարնիսս դարման տանելու ասուլութեան ծնունդ բոլոր ցաւերուն ու ցեցերուն: Իմաստութիւնով լցուէ, որ անով վարես հօտիդ բազմակնձիւ ու փորձալի վիճակը: Եղիտութիւնը ծուխերդ փճացուցեր է, ժողովուրդդ ցրուեր է, տղգդ պառակտեր, անձիտեր, անջատեր է ու փուցէ քու դասակարգդ ալ:

Հայ կղեր՛ր. մեղադրանքները չուրջդ պարսպեր են, պարտաւորութիւններդ պատնիշեր են. ո՞ր բանով, ո՞ր բրիչով պիտի կրնաս զանոնք հիմնայատակել: Անուն մը, Ներսէսի, Սահակի, Մեսրոպի, չպիտի կրնան այդ գործը գլուխ հանել, եթէ դուն Ներսէս մը չլինիս մեծովի ու հայրենասէր, եթէ դուն Սահակ մը չլինիս մեծամեծն ու խոհական, եթէ դուն Մեսրոպ մը չլինիս պարզուկ ու համեստուկ, այլ ժրաջան մտքի ու գրչի վաստակաւոր:

Ու տակաւին գիտե՛ս, Հայ կղեր, միայն Ներսէսներ, Սահակ ու Մեսրոպներ չէին որ քու դասակարգիդ անցեալ փառաւորութիւնը պատմագրեցին անջնջելիօրէն. չատ էին ժիր ու ուժեղ ծառայող սարկաւազներ, որսակեաց ու անձնդիր քահանաներ, մտքի, սրտի և հոգիի մաքրութիւնով փալող վարդապետներ, եկեղեցի ու ժողովուրդ հովուող ու հովանաւորող եպիսկոպոսներ, մեծամեծն, վեհօգի ու չնորհալի հայրապետներ, խաչով ու սուրով հայրենիքի պաշտպաններ. ու դուն հիմակ անոր դասակարգին կը պատկանիս ու նոյն

պարտաւորութիւններով նախնիքներուդ շարունակութիւնն ես: Է՛ր կը տատամսիս, ջանա՛, փութա՛ նոյն այն բարձրութիւնով ու նուիրական աշակերտութիւնով քարոզելու, չէ թէ լսկ խօսքով այլ ղարծով, չէ թէ վարձուորի մը նման այլ պարտաւորողի մը պէս. ոչ լոկ չրթներով, այլ անձին օրինակաւ, զի քու Տէրդ, Քահանայապետդ այդ օրինակաւ աշխարհին յաղթեց: Հասի՛ր հոն ուր վէճ կայ. քալէ հոն ուր խաղաղութիւնը վտանգուած է. փութա հոն ուր սէրը պակսած է, հաւատը նուաղած է, յոյսը ջնջուած է. ու քալէ հոն ուր արցունքը առուացեր է, կեանքը դերեզմանացեր. թո՛ղ հանգիստդ, անհանգստութիւններուն դարման գտնելու. ուրացիր կեանքդ, կեանքեր գնելու. տուր արիւնդ՝ լճացած արիւնները ցամքեցնելու: Ահա՛ պարտքդ:

Լոյսին քալէ՛ խաւարն ու մոլեռանդութիւնը թօթախելով, Լուսաւորչի լոյսը քիզ լապտեր ըրէ, Շնորհալիի շունչը քիզի պատրոյգ ունեցիր և Նարեկացիին ոգին ձէթ. եթէ դասակարգերդ քակուած ու քրքրուած են՝ վերաշինելու աշխատիր, ու բարձրացիր, ու բարձրութիւնդ ժողովուրդիդ մէջ որոնէ, պաշտօնիդ սրբութիւնը, նուիրականութեան վեհութիւնը, ծառայութեանդ խոնարհութիւնը, դատաւորութեանդ անկաշառութիւնը, աշակերտութեանդ դիրքը, առաքելութեանդ անձնութիւնը կրկին վերստացիր, անգամ մըն ալ ցոյց տուր թէ Ոսկի ու Արծաթ Դարերու Ս. Հարց գործունէութիւնը, կամքը, կորովը, նկարագիրը, ըմբռնումը, զգացումը, գաղափարը նոյնն են քու մէջդ, ու այդ ոգւով ցաւատանջ հօտիդ մէջ քալէ ու քարոզէ «Այսուհետեւ»ը. ու այն ատեն պիտի տեսնես թէ մեղադրանքները զադրած են, անհոգութիւնները վերցուած, դասակարգդ բարձրացած, Հայ Եկեղեցին իր վեհութիւնը զգեցած ու դուն վեհութիւններու սանդուխներուն վրայ:

Հայրենի՛ր. ծանր պարտքերով բեռնաւորուած էք Տան ու Հայրենիքի, անձի ու ընտանիքի հանդէպ, ու այդ կատարմանց մէջ՝ որպէս աշակերտի՝ թերմաւու չէք, և

երբէք, ու գնալու էք աշակերտեցնելու ու քարոզելու, ամենուն ուղիղ բանին, ճշմարիտ կենցաղին, ազնիւ բարքին, առողջ կեանքին, անվախ սրտին, ազգասէրի ոգւոյն, լուրջ մտածումներու, խռնական ընթացքներու. ու գծեցէք նշանաւորութեան մը՝ որոշ այն ուղղութիւններով որ տուն մը ամբողջ կ'երջանկացնեն, ազգ մը ողջնայն կը փրկեն. մկրտեցէք ձեր տունները արդարութիւնով, նախ վարուեցէք որպէսզի այդպէս վարէք ու վարժեցնէք. ու այս մտադրութեանը պէտք է առաջին ու որոշ տեղը գրաւէ հայրական վսեմ պարտականութեանց ճամբուն վրայ: Հայրերն են որ իրենց ընտանիքի ու հայրենիքի ճակատագիրը պիտի որոշեն. ու այդ պահուն քանի իմաստութիւնով քուլելու են, զի զանցառութիւնները արհաւիրալի ու աններելի հանգամանքով դուրս կուգան: Ուղղութիւնը տանդ կանոնը, սէրը ծրագիրը, իսկ իմաստութիւնը կառավարդ ըրէ. մի՛ մոռնար թէ մէկ սխալ ընթացքդ, անխոյժ վարմունքդ շատ յոռի տպաւորութիւններ պիտի թողնեն քու կրօններուդ վրայ և հազար ջանքեր այդ հետքերը չպիտի կրնան ջնջել: Մոլութիւններ, անիրաւութիւններ, անարարութիւններ, անպարտաւճարութիւններ երբ սանձարձակ գործուն կրդիքիդ տակ, անհամեմատ վրնամներով պիտի փակես կեանքիդ ու պատուիդ հաշիւները: Լաւ հաշուէ թէ դուն միայն ծնող մը չես, այլ նաեւ ուսուցիչ մըն ես. պարտքերդ անթերի կատարէ, սովորեցուր քու կրօններուդ ճշմարիտը, անկեղծը, անմեղքը, ուղիղ նկարագիրը, աստուածապաշտութիւնը, անվեհեր ու անխարդախ հայրենասիրութիւնը, սուրբ ու նուիրական պարտքերը. որոշ ու հաստատ արպաւորէ թարմ ուղեղներու մէջ Անհունին, Անվախճանին, Կատարեալին վսեմ գաղափարը, պրտերու մէջ դի՛ր կայծը կրօնին ու հաւատքին. մարդն ու թրձն միտքը գիտութիւնով ու իմաստութիւնով, զի անանկ միտք մը, անարժէք կեանք մը պիտի բեռնաւորեն մարդկութեան ուսին. սիրէ և սիրցուր մայրենի Յկեղեցիդ, գոյութեանդ ու պահպանութիւնդ միակ նեցուկը: Հոն կան

մագաղաթէ կտակագիրներ, որոնք նախնիքներուդ արիւնովը ժառանգութիւնդ գծեր են, ու թարմ արիւններ եկան անգամ մըն ալ տուելու. սովորեցուր քու կրօնութեանդ թէ սիրան ու հոգին՝ Սրբաբարութեան, Սիրոյ և Իմաստութեան մկրտութեանը կը կարօտին, ու մկրտէ դուն այսուհետեւ:

Մայրի՛ր. պահիկ մը ուշաքիւր անդրադառնալու էք մայրական սպարտական պարտականութիւններու. ա՛լ հերթէ ձեր անհոգ ու թույլ ու կեղծ բմբռնումը, որոնցմով կը կրթէք ու կը մարդէք ձեր աղջիկները փափկութեան, պերճանքի, պաճուճանքի ու նազանքի և օտարամոլութեան տնաւեր ու ձախաւեր ընթացքով. քիչ մը չըջանայիաց կղիւթ թէ չուրջդ ինչե՛ր չեն դառնար, մտածիր անգամ մը որո՞ւ կը ջանաս, որի՞ կը մեծացնես, որո՞ւ կը զարգարես ու կը պաճուճես. անո՛ր՝ որ մէկ ժամուան մէջ տարիներուդ տշխտաւորը կը փճացնէ լրբօրէն, անպատկառօրէն, անո՛ր՝ որ մահացու գործիով մը արմատաքի կը քանցէ ճիւղան արեւնիւրդ. անո՛ր որ անուկի ու քստմեկի եղեւնիւրով ամէն ինչ կ'առեանգէ ու կը լլկէ: Մայրեր, այսուհետեւ... Ու քարոզեցէք ձեր կրօններուն ու մեծացրէք աներկիւղ կամքով, անվեհեր կորովով, անմեղք ու անվախ սրտով, պարզ ու համեստ հանդերձով, անկեղծ փայլով, պայծառ սրտով, կիրթ վարքով, զիտուն մտքով, և անխոստարիների պնտուով ու վրիժառու նայուածքով. սորվեցուցէք անթերի կատարում կեանքի, պատուի հանդէպ ամէն պարտականութիւններու. հապա հայրենիքի՞ն, շատ առաւել. աշակերտեցուր հաւատարիմ մնալ հայրերու կրօնին ու լեզուին, բարքին ու վարքին. թող գիտնա՛յ թէ Հայն ու հայրենիք փոքր չէ և ո՛չ ալ թշուառութեան սահմանուած, ոչ ալ իրենք մորթուելու, առակ նշաւակի բլլալու. Հայն ու Հայրենիք անոնց համար միայն փոքր են ու ինկամ երբ չեն ճանչնար անոր մեծութիւնը և չեն աշխատիր. յառաջադրեցէ՛ք ձեր կրօնները ազգի ձայնին ու կոչին, որ կը պահանջէ ողջ ու առողջ գաղափար, սուրբ զգացում, ազնիւ ու լուրջ խորհուրդ, տոկուն նկարագիր,

անխարդախ հայրենասիրութիւն, համասկննցալ, պարկեշտ վարք, հիմնաւոր կրթութիւն, սրտուր սուր նախանձոտութիւն ու արիւն քաջի, հակայի, երբ որքութիւն մը պիտի պաշտպանուի, և արդար դատ մը պիտի փաստուի: Մայրե՛ր, ձերկնները որպէս պուպրիկ ու ֆանթէզիլ ցուցափեղկելու մէջ մի ցուցադրէ՛ք, մեղկ ու հեղզ բնութիւններ մի մեծացնէք. ոսկիէն աւելի կեանքը, զարդէն աւելի բարոյականը, գեղեցկութիւնէն աւելի միտքը, վայելքէն աւելի հայրենիքը, հաճոյքէն աւելի պատիւը նախադրու համարելու ու պարտաւորելու տգնտաւորին դատար ուսուցէք: Ուսուցէք, քարոզեցէք, մտքի մշակումը, սրտի բարոյացումը, հոգւոյ մեծութիւնը՝ ճակատներ արդարութիւնով, կուրծքերը սէրով, կատարելութիւնները իմաստութիւնով զարդարեցէք այսուհետեւ:

Գրչի մշակներ, մտքի բանուորներ, ա՛լ այսուհետեւ մշակեցէք գրչով արդարութիւնը, միայն տալ տողեղէք ու գծեցէք, էջեր աւոր յատկացուցէք, զի դա մեծ պակասն է որ իր պարտաւորութիւնով աչքառու է: Ու դուն ցարդ աւոր համար չէ՛ր որ կուռեցար, կքեցար, նկուղներու ու կոտտանքներու մատնուեցար, արեւ ճիւղան կտրիճներդ ու սրահատորներդ ո՛րը ձորերու աղաւաններու կեր կզան, որը գետերու սահանքներու մէջ կուլ կզան: Վայրագութիւններ, մոլեռանդութիւններ, ահաւելի տառամներ թուղթերդ իսկ արիւնտանցին, գրիչդ ժանգոտեցին: Ու երբ հիմայ գրիչդ պատեանէն դուրս հանած ես միակ զէնքդ ինչո՞ւ չչարժես անիրաւութիւնները ջախջախելու եթէ քու մէջդ ալ կան, ինչո՞ւ չփրբես ու փխրես անօրէնութիւնները, քուկդ ալ. ա՛լ գրէ արդարութիւն, ճառէ անկէ: Եթէ կը դանդաղես մեղադրելի ես, եթէ կը զանցաւոր դատապարտելի ես, իսկ եթէ եղբորդ դէմ, արեւնակցիդ հանդէպ՝ մշտնջենապէս կը պատժապարտես: Յիշէ՛ ու շատ մօտիկ անցեալը, ու թոյլ ու թող մի տար որ միմակ մահերը թուէ, արցունքները յորդէ, լըկումները ու լքումները գրէ. այլ դարմանը, միջոցը: Գրչի մշակ, հերկէ ու ափո-

սէ, վարէ ու ցանէ արդարութեան, սիրոյ ու իմաստութեան արտերը—Հայ արտերը: Մի՛ մոռնար թէ դուն ալ մին ես անոնցմէ, ու դարձիր ուղիւ պաշտօնդ ու պարտդ կատարէ: Մտքի բանուորներ, բանեցէք անխոնջ ու անքուն զի մտքի դաշտերը խոպան ու կորդացած են, վայրի խոտեր ու թուփեր անմշակելի դարձուցեր են. բայց զգուշութիւն, զի խովն ու սրօր երբ ուշադրութեամբ չգործածուին, կը վնասուին. եթէ գործիքնիդ նոյն այն գործիքներով կազմուած են, ինչպէս աշակերտներուն ու Առաքեալներունը, ա՛լ Գնացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, միլը տեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, ամէն:

ԳԷՈՐԳ. Ծ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

Խաղաղ

“ՏԱՃԱՐ”ԻՆ ՇՈՒՐՋԸ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

Հաճոյքով կը ծանուցանենք թէ Գաղատիոյ գրագէտ-բանասէր Առաջնորդ Գեր. Տ. Բարգէն Մ. Վ. կատարած է իր խոստումը՝ Տաճարին աշխատակցելու, ղրկելով գեղեցիկ յօդուած մը՝

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

զոր պիտի հրատարակենք յառաջիկայ թիւով: Ն. Գերապատուութիւնը խոստացած է մերի՛ ընդ մերթ զարդարել Տաճարի էջերը իր հմտալից յօդուածներով:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հաճած է մէկ օրինակ «Տաճար» նուիրել Անտիոքի Հաճի Հապիպի գիւղի վարժարանին:

Վսեմ. Մաթոս էֆ. Ունճեան 1 տարեկան «Տաճար» կը նուիրէ Գաթթեմուշի վարդուհեան Աղգ. վարժարանին:

ԴՐԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻ

Վերջերս Յոյն Օրթոտոքս եկեղեցին տաճնապի մը ենթարկուեցաւ ինչպէս ծանօթ է բոլոր լրագրի ընթերցողներուն: Համանման վիճակի միջեւ գտնուող երկու ժողովուրդներու մէջ — որպէս ենք Հայք և Յոյնք — փոխադարձաբար իրարու գործերու մասին ցոյց տրուած հետաքրքրութիւն մը իր օգտակարութիւնը պիտի ունենար, մեր գոյութեան համար, վասնզի երկու ազգերը կը կարօտին իրարու աջակցութեան և գործակցութեան: Մասնաւորապէս այս երկրին մէջ Յունաց օրինադրեալ նախապատիւ գիրքը և ունոնց ինչ ինչ առաւելութիւնները, երկու ազգաց հոգեւոր պետերուն գործակցութեան պարագային կրնան օգտակարապէս գործածուիլ մեր տէսակէտովը:

Յունաց Պատրիարքարանին մէջ ծագում առած տաճնապը, — որուն առօրեայ մանրամասնութիւնները մասնաւորապէս միշտ յիշատակուեցան, — պիտի տեսնուի չլրջահայեացող ինքեան գիտուած տեսն թէ ո՞ր աստիճան մը վեհանց նոյնիսկ Հայոց և այլ ոչ ինչ ազգերու, որոնց Հոգեւոր Պետերուն մէջ նախապատիւ գիրք ունեցող Յունաց Պատրիարքը ներքին տաճնապի մը և անտեղի վէճի մը պատճառով — որուն յարուցուելուն ոչ նուազ պատասխանատու է նաեւ ինքը — լուրջեան վաղատապարտուեցաւ և լուր հանդիսատես մը միայն եղաւ զինուորապետութեան գործողութեանց, ուր բազում դիտողութեան առարկայ կէտեր պիտի նշմարէր, եթէ Օրթոտոքս եկեղեցւոյ պետը իր պաշտօնին գլուխը գտնուէր: Իր հեղինակաւոր և ազդեցիկ ձայնը կրնար նշանակելի եղանակաւ տրուում մը մտցնել և դարմանել ինչ ինչ անկանոնութիւններ, որոնց հետեւանքը կը կրեն այսօր շատեր: Հետեւաբար Հայերս ալ միասին տուեցինք Յունաց Պատրիարքարանի տաճնապին պատճառով, որուն ծա-

գումը պէտք եղածին պէս չապացտուեցաւ: Հայ մասնաւոր մէջ, վասնզի դժբախտաբար Օրթոտոքս Պատրիարքարանի վրայ մեր ունեցած ծանօթութիւնները շատ թերի են ու պակասաւոր:

Արդ, պիտի փորձենք համառօտ կերպով բացատրել թէ ի՞նչ է վէճին բուն շարժառիթը և պատճառը:

Օրթոտոքս Տիեզերական Պատրիարքարանին եկեղեցական և քաղաքական վարչութեան համար ամէնէն առաջ որոշ կարգադրութիւններ եղած են ԺԸ. դարուն մէջ, Սամուէլ Պատրիարքի (1769-1780) պաշտօնավարութեան ատեն: 1770ին կազմուած կրօնական ամէնէն բարձր ատենը կամ ժողովը — որ կը կոչուէր Կերուզիա — կը լուրջանաբար վեց նախապատիւ մետրապօլիտներէ և երկու նշանաւոր աշխարհականներէ:

Այս դրութեամբ կազմուած ժողովներ Յունաց Պատրիարքին իրր խորհրդական պաշտօնավարելով, Օրթոտոքս Պատրիարքարանին վարչական գործերը մատակարարեցին մինչեւ ԺԹ. դարուն կէսերը:

1847ին, ինչպէս ծանօթ է, Ռուս կառավարութեան Քրիստոնեաներու մասնաւորապէս Օրթոտոքս ժողովուրդներու վրայ ունեցած յաւակնութիւնները՝ ստիպեցին Բ. Դուռը՝ մէկ կողմէն Պալթա-Լիւանի դաշնադրութեամբ տալ այդ միջամտութեան իրաւունքը, և միւս կողմէն բարեփոխել Քրիստոնէից վիճակը, բաւնալ այդ միջամտութեանց շարժառիթը:

Հետեւաբար նախ կանոնաւորելու հետամուտ եղաւ յաջորդաբար Յունաց, Հայոց և միւս ազգերու Պատրիարքարանները, որոնց վարչութեան մէջ աշխարհականներու լայն բաժին մը վերապահուեցաւ, նոյն իսկ Բ. Դրան հրամանով:

Այսպէս, ինչպէս մեր Պատրիարքարանի կը հրամայուի կազմութիւնը Հոգեւոր և Գերագոյն ժողովներու, նոյնպէս նաեւ Յունաց Պատրիարքարանին նոյն թուակա-

նին կը հաղորդուի, կրօնականներէ բող-
կացեալ ժողովին գործակից, կազմել նաեւ
երեւելիներէ կազմուած ուրիշ ժողով մը,
իբր աշխարհական գործոց տեսչութեան յա-
տուկ մարմին:

Այս վիճակը շարունակեց մինչեւ 1862,
մեր Սահմանադրութեան կազմութեան
թուականէն երկու տարի յետոյ, երբ Յու-
նաց Պատրիարքարանին մէջ ալ վերջնա-
պէս կը կազմուէր այսօր գործադրուած օ-
րէնքը, 1856 փետր. 6/18ին հրատարակուած
Իսլահաթի հրովարտակին համաձայն, որ
միանգամայն յանձնառութիւն մըն էր, ուր
որոշուած կը խառնամար Օսմ. կառավա-
րութիւնը, վերաքննել հպատակ ժողո-
վուրդներու Կանոնադրիւնները և ժամանակին
պահանջմանց համաձայն նորեր կազմել:

Այդ հրովարտուող որ Բարիզի մէջ դաշ-
նադիր եղող պետութեանց ևս կը հաղոր-
դուէր, կը ստանար միջազգային կարեւո-
րութիւն, և Բ. Դուռը խորհրդակցու-
թեամբ նոյնիսկ հպատակ ազգերու Հոգեւոր
Պետերուն գործի կը ձեռնարկէր:

Այդ հիման վրայ ահա կը կազմուէր
Յունաց Պատրիարքարանին ներքին կանո-
նագիրը, որ կը կոչուի Սինդակաթիֆոն,
մինչ 1847էն մինչեւ 1862 գործադրուածը
կը կոչուէր Արխիքիֆի:

Արդ, հիմա գործադրութեան մէջ եղած
օրէնքին զօրութեամբ, Սինդը -- մեր
Պատրիարքարանի Կրօնական Ժողովին հա-
մապատասխան մարմինը -- կը բողկանայ
տաններէ Մետրապօլիտներէ, Սինդին
անդամ ըլլալու իրաւունքը ունին Պատ-
րիարքարանին իրաւասութեան ներքեւ
գտնուող բոլոր Մետրապօլիտները, որոնց
թիւը 70ը կ'անցնի:

Սակայն իրենց ընտրութիւնը քուէով չէ
և ոչ ալ որոշմամբ որեւէ Մարմնոյ մը, այլ
կարգով: Բոլոր Մետրապօլիտները բաժ-
նուած են երեք դասակարգերու, որոնց
ամէն մէկէն առնուած երկերկու անդամ-
ներ, ամէն տարւոյ սկիզբը կը յաջորդեն
երկու տարիէ ի վեր պաշտօն վարող վեց
Սինդակաթներու, այսինքն ցուցակի մը
համաձայն բոլոր Մետրապօլիտները կ'անդա-
մակցին Սինդին, որ այս ձեւով տարին

անդամ մը կէս առ կէս կը նորոգուի, և
ամէն մէկ անգամ երկու տարի պաշտօն
վարելով կը թողու իր աթուր: Իրենց
կարգը կը կորսնցնեն և երկրորդ չըջանին
սպասելու կը պարտաւորուին այն եպիսկո-
պոսները, որոնք իրենց ձեռնադրեալ թեմին
մէջ հինգ տարի և այլուր փոխադրուելէ
յետոյ երեք տարի պաշտօն չեն վարած:
Հրաժարելու իրաւունքէն ալ զրկուած են,
բացառութիւն ըլլալով ծերունիները և
ֆիզիքապէս անկարողները:

Այս կանոններուն համաձայն Պատրիար-
քը Սինդի կազմութեան գործին մէջ
որեւէ միջամտութեան իրաւունքէ զուրկէ:
այլ իր առջեւ գտնուած ցանկին համաձայն
պարտաւոր է տարւոյն սկիզբը իրենց չըր-
ջանը աւարտող Մետրապօլիտները հրախրել
որ մեկնին, և կարգին վրայ եղող վեց
ուրիշները հրախրել որ գան պաշտօն ստանձ-
նելու:

Նախապէս՝ սակայն՝ այսպէս չէր կազ-
մուեր Սինդը: Այսինքն 1847էն մինչեւ
1862, իրարու յաջորդող Սինդները կը
կազմուէին ուղղակի Պատրիարքին կամքովը
որ չըջանին աւարտողներուն տեղ նորեր
կ'առնէր՝ խորհրդակցութեամբ Սինդին,
որով աւելի կամ նուազ Տիեզերական Պատ-
րիարքին քմահաճոյքին կապուած էր Սինդ-
դին կազմութիւնը:

Տ. Եօսեփոս Պատրիարք օգտուել կ'ուզէր
Յունաց Պատրիարքներու այս վաղեմի՝ սա-
կայն հիմա ջնջուած իրաւունքէն, սովորա-
կան կարգին մէջ ներմուծել ուղեւով փո-
փոխութիւն, վասնզի իրենց կարգը եկած
վեց մետրապօլիտներէն երեքը իրեն անձ-
նական հակառակորդներ կը նկատէ:

Սինդը գործադրութեան մէջ եղած օ-
րէնքին վրայ յենլով կը պահանջէ սովորա-
կան կարգը պահպանել, և Տ. Եօսեփոս
Պատրիարք, ներկայ օրէնքին խմբագրու-
թենէն յետոյ 1868ին Դիդոր Զ. Պատրիար-
քին օրով գործադրուած բացառութեան մը
վրայ հիմնուած, մասնաւորապէս սպասելիե-
լով իր ժողովրդականութեան, կ'ուզէ իր
բացարձակ կամքին հպատակեցնել Սինդը,
որ կը պնդէր իր տեսակէտներուն վրայ
աւելի քան ամիս մը:

Հետեւաբար Պատրիարք և Սինոդ իրարու դէմ գործադուլ ըրած, և Պատրիարքարանը անիշխանութեան մասնաձեռն, վանդի ըստ կանոնադրին, Սինոդին որեւէ մէկ որոշումը որ Պատրիարքին ներկայութեան չի տրուիր, անվաւեր է, և փոխադարձաբար Պատրիարքը առանց Սինոդին հաւանութեան անկարող է գործելու: Սակայն Պատրիարքին ներկայութեանը քուէից առաւելութեամբ Սինոդէն տրուած որեւէ որոշում պարտաւորիչ է Պատրիարքին համար, որ ստիպուած է գործադրել զայն: Ուստի Տ. Եօաքիմ Պատրիարք զգուշացու նախագահելէ Սինոդին, որ մեծամասնութեամբ, կանոնադրին տրամադրութեան համաձայն, Սինոդականները որոշելու տրամադիր էր, և իր որոշումը եթէ տար Պատրիարքին ներկայութեանը, այդ վճիռը պարտաւորիչ պիտի ըլլար իրեն համար: Պատրիարքը չնախագահելով ժողովին, Սինոդը անգործութեան դատաւարտուեցաւ, վանդի իր որոշումները — ինչպէս ըսինք — չեն կրնար վաւերական համարուիլ, երբ տրուած են առանց Պատրիարքին ներկայութեան:

Այսպէս, հոգեւոր բարձրագոյն հեղինակութիւնը համարուած ժողովը անգործութեան դատաւարտուեցաւ, Օրթոտոքս Եկեղեցւոյ պետը նաեւ մասնելով ի հոգեւորս, կատարեալ անդամալուծութեան մը:

Եթէ վերջը հոս սահմանափակուէր, տագնապը այնքան մեծ համեմատութիւններ առած չպիտի ըլլար, և հոգեւոր այս անդամալուծութեան պակասը քաղաքական գործունէութեամբ մը պիտի լրացնէր Տ. Եօաքիմ Պատրիարք, որուն մեծ փորձառութենէն և անձնադիր աշխատութիւններէն փոխանակ օգտուելու, Յոյն ազգը ընդհակառակն պահ մը տուած, վանդի կ'երեւայ թէ Տ. Եօաքիմ Պատրիարք իր մեծ մարդու վայել առաքինութեանց հետ, ունի նաեւ անոնց յատուկ քինախնդրութիւններն և տկարութիւնները, որոնք սեկէտերը կը ձեւացնեն ամբողջ լուսաւոր ճամբու մը որմէ քալած են անոնք անընդհատ:

Սակայն, դժբաղդաբար, տագնապը կը

ծաւալէր Յունաց պատրիարքարանի բոլոր վարչական կազմին վրայ, վանդի Սինոդականները չմասնակցելով ինչն ժողովին, կ'անդամալուծէին նաեւ Պատրիարքարանի աշխարհական գործոց տեսչութիւնը:

Յունաց իսառն ժողովը — այն որ կը համապատասխանէ մեր Քաղ. ժողովին — կը բաղկանայ 12 անդամներէ, որոնց չորսը Սինոդին անդամներէն առնուած են և ճը աշխարհականներ են: Որովհետեւ իսառն ժողովի 8 անդամները Պատրիարքին կողմնակից հանդիսացած և Սինոդին ընթացքը պաշտարակած էին, Սինոդի չորս անդամները գործադուլ ըրին իսառն ժողովին դէմ և չմասնակցեցան ժողովի, որով այդ ժողովն ալ անգործութեան մասնուեցաւ, մասնաւանդ սա պատճառով որ իսառն ժողովին նախագահութիւնը իրաւունքն է անդամակից եկեղեցականներու աւագագոյնին, և ոչ թէ Պատրիարքին, որ կրնայ ժողովին ներկայ գտնուիլ երբ որ պէտք ըլլայ, սակայն գործոն նախագահութեան իրաւունքէն զուրկ է:

Նիկոմիդիոյ Մետրապոլիտը՝ որ այդ պաշտօնը ունի, իսառն ժողովի աշխարհական անդամներուն բռնած ընթացքին համար կը մերժէր իսառն ժողովը նիստի հրաւիրել, որով այս ժողովն ալ մասնուէր անգործութեան:

Հետեւաբար Օրթոտոքս Պատրիարքարանը, կը ներկայացնէր տակաւին քանի մը օր առաջ տխուր վիճակ մը, իր հոգեւոր և վարչական գործոց գործադիր իշխանութիւնը՝ Պատրիարքը հրաժարած, կրօնական բարձրագոյն հեղինակութիւնը՝ Սինոդը ձեռնաթափ եղած, և աշխարհական գործոց տեսչութիւնը՝ իսառն ժողովը, անգործութեան մասնուած ըլլալով:

Մեր դրացի և քոյր Եկեղեցւոյն վարչական այս տագնապը, որուն հետեւանքը մինք ևս կրեցինք, ուրախ ենք որ վերջ գտաւ և դարձեալ իր ոգեւորուած գործունէութեան մէջ կը տեսնենք Տ. Եօաքիմ Պատրիարքը, որուն աշխատութիւններէն կրնան օգտուիլ այս պահուստ ոչ միայն Յոյները, այլ նաեւ Հայերը:

ԱՐՇԱԿ Ա. ԱՂՊՅԱՆ

Մ Ր Մ ՈՒ Ն Ջ Ն Ե Ր

«Տ Ա Ճ Ա Ր» Ի Հ Ռ Պ Ի Է Ն

Հ Ա Ի Ա Տ Ա Յ Ե Ա Ն Ե Ե Ր ՈՒ Հ Ո Պ Ի Ի Ն

Ա. Ծովի ու պահարի մէջ՝ թէ՛ կրօնապէս թէ՛ փիլիսոփայաբար թէ՛ բնախօսօրէն՝ կայ խորհուրդ մը նախնական երանելի վիճակին ձգտումով և բժշկութեան անկեալ թըշուառացեալ ու հիւանդացեալ արդի մարդկութեան։ Ծովի առնէ՝ բանականութիւնն առատ ու ազատ կը գործէ, և պահքը ժողովալ և խաղաղ խնայողութեան սառնորդն է։ Ծովը՝ խնայողութիւնն մըն է լուելու նման, և պահքն՝ ոյժ մը կա՛րճ ու ճիշդ խօսելու նման։

Բ. Ահագին է՝ մարդկօրէն խօսելով՝ ճիշդ որ տեղի կ'ունենայ երկինքի ներկրի հետ զօրակցութեամբ ամէն տեսակի նիւթական և աննիւթական միջոցներով՝ դարձի բերելու կամ իր նախնի հրեշտակութեան վերածելու համար մարդը՝ այդ միջոցներուն ամէնէն խոնարհապէս հզօրն է աստուածախաչը քրիստոնեային համար, կատարելութեան մարդասիրութեան անձնութեան հին խորհրդանշանը, որուն պանծալի սահմանն և օրէնքն ալ հիւսած է քաջ հայ փիլիսոփայ մը, Դաւիթ անյաղթ։

Գ. Ինչ կը տեսնես, ո՛վ յայտնասե՛նք միտք, այսքան աւերմանց, կոտորածներու, մահերու, և թշուառութեանց մէջ աշխարհի վրայ.— Մարդկութեան մեղքերուն և արդար ողորմութեան կռիւը։

Դ. Ամէն վկայեալ հաւատքի մէջ այնպէս մը մենասքողուած կը թուի տիեզերական ճշմարիտ կրօնին ճառագայթը, որ ինչ և է ոք ամենայնիւ զրկահարեալ՝ փոխելու համար իր հաւատքը կը կրէ մահու չափ դժուարութիւն մը ներսէն, զի իր գիտակցութիւնն իր հոգեկան բովանդակութեանը կը գոչէ թէ իր հաւատքին մէջ է՝ որ իր դարձն իր մարդասիրութիւններն իր բարի վարքը կամ ասոնց ներհանները պիտի գտնեն իրենց կշիռ հասունցումը։

Ե. Մեղքերովդ մոլութիւններովդ ա-

րիւնդ նուազած պաղեցուցած՝ կ'ուզես որ սոսի մաքի գեղեցիկ բլուրը գեղազարդող ձիւնէ քողը՝ տաք ալ ըլլայ։ այդ քունքնակեղրոն արտառոցիկ քմայքդ է՝ որ չպատասխաներ բնութեան անհուն կարգին. և նախ՝ ինք ձիւնին յատկութենէն չէ՛ տաք ըլլալ։ Ինք չկրնար ցուրտ չըլլալ, քայց դու կրնայի՛ր. իր գոյութեան պատճառն իսկ է ջերմութեան իւր չգոյութիւնը։ Դո՛ւ պիտի յարմարիս բնութեան համատարած կարգին ոչ թէ ինք քեզի, մանաւանդ բնութիւնդ այլակերպած լեզուդ։

Ս. յայտն է ամեն բանի վերաբերումով։

Ձ. Համբերութիւնը, այն աղամանդէ կարծրակիր բանալին, համբերութիւնը՝ վշտաց դէմ արե՛կ կ'ընէ մարդը, համբերութիւնը՝ դժուարութեանց դէմ հնարագէտ կ'ընէ, համբերութիւնը՝ չարերուն դէմ հրեշտակ ու յաղթող կ'ընէ անոնց, համբերութիւնը՝ փորձութեանց դէմ հոգիի իշխան կ'ընէ, համբերութիւնն հիւանդութեանց դէմ՝ բժիշկ կ'ընէ, համբերութիւնը՝ ձախողութիւններու դէմ յաջող կ'ընէ, ապերախներու դէմ առաքեալ կ'ընէ, աստանաներու դէմ աստուածային կ'ընէ, աշխատութեանց դէմ պսակաւոր յաղթական կ'ընէ, անձանօթներու գաղանիքներու և անգիւտներու հանդէպ հանճար կ'ընէ, դժոխքի մէջ երանաւէտ փրկիչ կ'ընէ, կեանքի մէջ փիլիսոփայ ու մահուան մէջ անմահ։ Որով կը ճշմարտի գործնականին մէջ ուսածը՝ թէ հաւերեռութիւնը կեա՛նք է։

Է. Ինք Հայրն Ամենակալ ամէն օր ամէն ժամ՝ յաւիտենից մինչև յաւիտեն՝ կը հրաշայունէ միշտ տիեզերքին ու մեր մէջ անմահ օրէնքներու վսեմ բանաստեղծութիւնը նիւթապէս ու հոգեւորապէս։ Այս անհուն քնարը, այս ահագին բովանդակը՝ ո՛ր քերթողը լարած է ու կը թըրթռացնէ վսեմաբար ու անյկլի ներդաշնակութեամբ. որուն մէկ ծայրը մեր հողին ներսերը կը արտփէ ու միւսն ամբաւ խորոց մէջ կը տեսէ յարաձգեալ՝ անանկով բացարձակ ճշմարիտին մրմունջներովը, ո՛ր քերթողը թէ ո՛չ ինք, պտեղծողն ու մեծ Բանաստեղծողը։

Ը. Բայց այդ անմահ օրէնքին մէջ մահն

ու չարն ուստի՞ է . . . : Վա՛յ քեզի կայեն, չը
թափեցիր առաջին արիւնը կոյս հողին վրայ,
վա՛յ ձեզի կայինեանք որ կը շարունակէք
զեւ ոգոննութիւնն և պոտերազմը և,
իրաւ է արդեօք որ քաղաքներն ալ կա-
յինէն սկիզբն տան . . .

Թ. Հաւազոյնն յաւիտեանց մէջ՝ կեն-
դանի այսօր միշտ այժմէն է, որ եթէ խա-
ղաղ ըլլայ երկրի վրայ՝ փենդանի արքա-
յութեան մը անպաւիտեանն է :

Ժ. Իրր ամէն քայլի ու վարձուրդի
մէջ՝ բարիին հաւատքն է որ կը մզէ մեզի
ճշմարտութեան ու բարիին՝ արջափ հնար
է մահկանացու անկեղեկութիւնը . նոյն իսկ
զիտաբիւն ըստածին առաջնորդութիւն ալ
հաւատքն է, եթէ հաւատաւով թէ սիրածս
կը սիրէ զիս, պատի կրնամ մամանել զի-
տութեան մը և կայ այդպիսի զիտութիւն
մը՝ չեմ կրնար բերել զայն Վե՛մ սերիս ու
համար սուրբ զիտութեան՝ զիտութիւն, շահիլ
կամ տեսնել այս արմատն ստոյգ կամ
տաւ իսկ ըլլալը : Հաւատաւով խորհրդա-
ւոր բաւականութիւնը կը բանայ խնկած
մարդուն համար բարձրութեան միակ դուռ
մէն ալ՝ ելլելու անդունդէն զէս ի սնահունը :

ԺԱ. Ամէն սկիզբ՝ ըլլա՛յ ներշնչւոյ ըլլա՛յ
նմանակ՝ պէտք է ճիշտ անհատաբար ան-
հուն անսկիզբի պաշտեցեալ դադարաբան
հանդէպ որ կը սրբադրէ ամէն սկիզբ, և
որուն անսահման սահմանակալութեան
հանդէպ պէտք է խոնարհի՝ սահմանաւորի՝
ամէն կարծեցեալ ուղղութիւն հպարտ,
ամէն արդարութիւն մարդկային եմի : Եւ
այսպէս՝ կը քաւտին ալ սխալները ժա-
մանակին :

ԺԲ. Օրէնքն՝ առ այժմուն անվատ ար-
նօրինութեան կանոնն է, որչափ ներքէ հար-
կը : Մշտօրէնք վերինն է, որ անսխալա-
ներով կ'օրինաւորէ շատ բան :

ԳԱՐԵԳԻՆ(Ե)

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն Երկրորդին)

Իրաւ է թէ Շարունակի խաղերն իրենց
օգուտը ունեցած են ժողովրդականաց մէջ,
երբեմն փրկարկու և մերթ շուտ անցնե-
լու, յաճախակի շեշտելու և մերթ ընդ-
մերթ մեղմաձայն երգելու հոգեւոր բաց
բողբոլին անհեթեթ է կարծել որ այդ
խաղերու զօրութեամբ կարելի ըլլայ չիւ-
նոնաւորապէս փորձալ ո՛ր և է եղանակ մը,
նա մանաւանդ իր գոյմանն յիմանիկ մէջ :
Թերեւս Արրոյ թարգմանչաց օրով՝ հեղի-
նակաւ աչա տեսակ մը՝ ձոյնազրութիւնը
կրնայ եղեր դոհացում տալ ձայն պաների
Դպրաց՝ ճշտութեամբ երգելու համար : և
Վենք նոյնիսկ այդ անկեղեկութեամբ ճշիւ
համար կերպով ծայրէ ի ծայր խղճատե-
ցինք Դպրատարաբանի վերջիչեալ գոր-
ծերը, կարծելով որ այդ անհեղապիտ
ուստեան վրայ պիտի կրնանք քիչ շատ գա-
ղափար մը կազմել, սակայն ցաւալի է ըմբ
որ այդ լորիւթիկութիւն մէջ յաւարտաւոր
թեմէ զատ ուրիշ բան չգտանք :

Պատգաւ Համարձեռակ հոկոս տկորդաց
պարագլուխն համարուող Տիրացու Եղիշէ
ճնած է ի Դուռնաբու 1770ին, այժմեան
Խաւատարչեան աղջկանց վարձարանին վո-
ղոցը : Մանկութեան հասակէն բուռն փա-
վաք մ'ունէր սա եկեղ. երաժշտութեան
հետեւելու, ուստի շարունակ կը յաճախէր
Մայր Եկեղեցի, իր թաղին ամենէն մօտիկը
դանուկուն համար : Կը պատմուի թէ օր
մը խլենցատունէն հրդեհ ծագելով ամբողջ
շէնքը այրեցաւ : և որովհետեւ այն ատեն
սովորութիւն եղած էր հրդեհը սկսած ատեն
զիտաւորը ծանր պատիմներու ենթարկել,
այս օրինաց համեմատ Եղիշէ զատապար-
տուեցաւ խիստ պատիմներ կրելու : Պէտք
ճեան Յարութիւն ամիրա՝ որ համակրածիք
Եղիշէի՝ ջերմ եկեղեցատիրութեան համար,
փութաց այս անարգար որոշման դարձա-
դրութիւնն արգիլել, և աղափարել Կիւմրի
Եկեղեցարան իր ծախեղեղեաց բնակարանին

(*) Այս ծածկանքունն ճակ կը վարագործուի
ազգին այժմու շաւաղոյ՝ զազեաներէն խմաստա-
սեռ, խոնուն միտք մը, որ հիւն մը ու նոր մըն և
միանգամայն :

ձօտ արւն մը վարձեց ու հոն բնակեցուց զեղիսէ, որ պէ երախտագիտութեան՝ շատ անգամ Ամիրային եալնն երթալով կ'ըսուցնէր զայն իր երգած եղանակներով:

Տիրացու Եղիսէ ցասկոտ և նախանձոտ բնաւորութիւն մ'ունենալուն համար շատ անգամ իր քով դասին մէջ կեցող զպիր-նէրը բարձրաձայն կը յանդիմանէր՝ ամենափոքր պակասութիւն մը նշմարած ատեն: Այս գէշ ունակութեանն համար օր մը Ադրիանուպօլսեցի Պօղոս Պատրիարք իրեն ներկայութեան կոչելով զԵղիսէ, կը յայտարարէ որ այդպիսի կոչութեամբ չվարուի տղայոց հետ՝ որուն կը պատասխանէ Տիրացուն, «Թապիցէթս աս է Սրչաղան, չք պօռամ նէ տահա կէշ կ'ըլլամ»:

Եղիսէ երբեմնակի կ'այցելէր նաեւ ի Բերա, ուր առաջին անգամ հանդիպեցաւ Պապա Համբարձումի, որու դէմ շատոնց ի վեր խուլ հակառակութիւն մը կը տառնէր: Տիրացու Եղիսէ միշտ կը սնդէր թէ անկարելի է որ ձայնագրութեամբ շարահանք եղանակուի, իոկ Համբարձում կը պատասխանէր թէ ասոր փորձն ընել չա՛տ դիւրին է. վերջապէս օր մը Եղիսէ ուղեւորով պղտիկ ձգել զՀամբարձում, կը հրամայէ որ «Ուրախացիր Սրբուհի» ճրագաւորցի օրհնութեան եղանակը ձայնագրէ. կը համակերպի Լիւծոնեան և այդ Շարահանք Եղիսէի կարգադրած կերպով ձայնագրութեան աննկէ յետոյ ճշգրտութեամբ կը կորդայ զայն, որոյ ի պատասխանի ուրիշ թերութիւն մը չկարենալով դանել, ձայնին տգեղութիւնը մէջ կը բերէ միայն:

Տակաւին Մայր Եկեղեցւոյ դասախօս չէր կարգուած Պապա Համբարձում, երբ տօնական օրի մ'առթիւ հրաւիրուեցաւ Պէդճեան Յարութիւն ամիրայէ՝ երգել նոյն եկեղեցւոյ մէջ: Լիւծոնեան՝ որ շատոնց կը բողձար իր վարպետութիւնը ցոյց տալ այդ կեղբորմէն մէջ, ամենայն հաճութեամբ ընդունեց Ամիրային հրաւերը և սկսաւ Հարց Շարահանք կարդալ. միեւնոյն միջոցին Պէդճեանը որ Տիրացու Եղիսէի ետին կանգնած էր միւս դասին կողմը, բոլորովին անգիտակ ձեւանալով կը հարցնէ թէ ո՞վ է այդ տիրացուն:

— Նօթանի Համբարձում ըսածնին տակաւ է, կը պատասխանէ դառնութեամբ Եղիսէ, և վար զարնելով անոր հաստ ձայնը՝ կ'սկսի սրտին մէջ հաւաքած մաղձը դուրս թափել: Գաղէզ Ամիրա կարեւորութիւն չտալով Եղիսէի ըսածին՝ կը յանդիմանէ իւր բրած անիրաւութիւնը, առարկելով որ եթէ այդ մարդը կը յարգեն ու կը պատուեն, հա՛րկաւ ունեցած արժանիքին համար է և ո՛չ թէ հասակին(*) երկարութեանը պատճառաւ:

Երբ Պապա Համբարձում Պէդճեան Յարութիւն ամիրայի հրամանաւ հաստապուեցաւ Մայր Եկեղեցւոյ դասախօսութեան մէջ, մեծ հարուած մը եղաւ այս գէպքը Տիրացու Եղիսէի, և չկարենալով երկար առնն ապրիլ, մեռաւ 1833ին:

Գարթալցի Յարութիւն վարժապետ ծրնած է նո՛յնպէս ի Գումգարու 1779ին, և իր մանկութեան ատեն աշակերտած ըլլալով Չէննէ Պօղոսին, ընկերակից եղած է Պապա Համբարձումի, որոյ ջերմ հակառակորդն եղաւ վերջերը: Սա ի տղայ տիոց հետեւող ըլլալով եկեղեցական երաժշտութեան, կ'ըրաղէր Շարահանքի դասախօսութեամբ, և ա՛յնչտի լաւատեղեմիկ էր ասոր, որ գրեթէ մեծաւ մասամբ գոց կ'երգէր բոլոր Օրհնութիւններն, Հարցերն ու Ստեղծ Մանկունքները:

Թէեւ սորա մասնաւոր արհեստը ոսկերչութիւնն էր, բայց Պէդճեան Յարութիւն ամիրա՝ որ իր դարուն համայն Գալստիսեան սատարն եղած էր թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս, ստիպեց զՅարութիւն՝ թողուլ այդ արհեստը և երթալ հաստապուի ի Գարթալ, եկեղեցական երգեցողութեան դաս տալու համար:

Տիրացու Յարութիւն՝ Ս. Նշան եկեղեցւոյ մէջ 17 տարի շարունակ այդ պաշտօնը վարելէ յետոյ, (որոյ պատճառաւ Գարթալցի մականունը տուած էին իրեն,) դարձեալ Գաղէզ ամիրայի հրամանաւ դըպրապետ կարգուեցաւ 1828ին Մայր Եկե-

(*) Պապա Համբարձում բնութեամբ ծանրաբարոյ ըլլալով հանդերձ պահպանելի դեմ ու երկայն հասակ մը ունէր, միեւնոյն տիրացու Եղիսէ ընդհակառակն կարճ էր հասակաւ:

ղեցւոյ, որու յարակից Ուսումնարանին մէջ կը դասախօսէր դպրոցաւարտ աւագոց։ Սորա համար կ'ըսեն թէ իւր հեղափարոյ վարուքն այնքան սիրելի եղած էր Պէդ-ճեանի, որ չարունակ կը թախանձէր զինքը՝ ամուսնանալ և առ այդ յաջողելով հրամայած էր որ նորա հարսանեաց ամբողջ ծախքը իր գանձէն վճարուի։ Նոյնպէս նաև մեծ բարիք մ'ալ գործեց Պէդ-ճեան ամիրա, իր կենդանութեան ատեն կտակելով գումար մը՝ որով ցմա՛հ 500 զրշ. ամսաթոշակ պիտի ստանար Մայր Եկեղեցւոյ դպրապետութեան պաշտօնը վարող Լրամիշար։

Գարթալցի Յարութիւն վարժապետ 40 տարի արդիւնաւոր կերպով դասախօսելէ վերջը մեռաւ 1853ին, բաղմամբիւ աշակերտներ ընծայելով Ազգին, որոց գլխաւորներն եղած են Տիրացու Անդրանիկ, Աջալուրկ Մելքոն, Կարճ Յովհաննէս, Գամաղիէլեան Գրիգոր, Փէշիվանեան Յովսէփ, Էքմէքճեան Յակոբ և Զարպանէլեան Մկրտիչ՝ «Բալապլըք» մականունանեալ։

Տիրացու Պետրոս վարժապետ ծնած է 1783ին և մեռած 1858ին յՕրթագիւղ։ Սա՛ որ նոյնպէս աշակերտած է Զէննէ Պօղոսին, յետոյ օգնականութիւն ընելով իր վարպետին, չառ տարիներ վարած է իւր թաղին եկեղ. երաժշտութեան և ընդհանուր դաստիարակի պաշտօնը, աշխատելով բարեկարգ վիճակի մը հասցնել նոյն եկեղեցւոյ Դպրոց Դասը, որոյ արժանաւոր ներկայացուցիչներն եղած են Նրէցեան Յովհաննէս, Թաղւարեան Գրիգոր (յետոյ Տ. Պօղոս), Աճէմեան Գաբրիէլ և Մինէճեան Յովհաննէս։

Այս վերջինը՝ որ իւր բոլոր ընկերակիցները գերադնայած է իր քաջամտութեամբ և հոգեզմայլ երգեցողութեամբ, ծնած է 1795ին ի Պալաթ։ Այս աննշան թաղը նախորդ դարու մէջ խիստ փառաւոր անցեալ մ'ունեցած է, և Սամաթիայէն յետոյ՝ առաջինն հանդիսացած է Դպրաց Դասուն մէջ ունեցած փայլուն տաղանդներովը, որոց մէջ մեծ տեղ մը կը գրաւէ Տիրացու Յովհաննէս Մինէճեան։ Սա՛ թէեւ անտեղեակ էր ձայնագրու-

թեան արուեստին, բայց ա՛յնպիսի յանկուցիչ ձայն մ'ունէր, որ զինքը լսելու համար մայրաքաղաքիս հեռաւոր թաղերէն գունդագունդ կը գլմէին Ս. Հրեշտակապետ եկեղեցին, և զմայլմամբ կ'ունկնդրէին մեծանուն դպրապետն երգեցողութեանց։ Այդ համեստ թաղին մէջ՝ ուր իր բնակութիւնը հաստատած էր, կը դասախօսէր նա անխոնջ եռանդով, և Ներսէս Շնորհալիէ աւանդուած Շարականները խնամքով կ'ուսուցանէր իր աշակերտներուն, որոց մէջ երեւելի հանդիսացած են Տիրացու Կարապետ Պաղտատեան (1817—1903) Գրիգոր Ղիսարեան (1824—1891), Սիմոն Մինէճեան և Ալիքսան Գրիգորեան (այժմ Տ. Վահան քահանայ)։ Սոքա ամէն կերպով նախանձախնդիր գանուեցան անեղծութեամբ պահելու իրենց վարպետէն փառանգած հին ասմունքները, ջերմապէս հետեւող ըլլալով անոնց։

Այս բազմարդիւն վարժապետը դժբախտաբար քիչ կեանք ունեցաւ, և իր գրեթէ երիտասարդ հասակին մէջ մեռաւ 1842ին, հազիւ 47 տարի ապրելով։

Ասոնցմէ զատ կը յիշուին նաև զանազան թաղերու մէջ եկեղեցական երաժշտութեան պաշտօն վարող դպիրներ, որոնց գլխաւորներն եղած են Մաղաք վարժապետ և տիրացու Գրիգոր յԼեռնիւտար, տիրացու Գաբրիէլ ի Գուղիււնճուք, տիրացու Սրապիոն († 1852) ի Պալաթ, Խախմաճի Գէորգ ի Սամաթիա, տիրացու Յովհաննէս յՕրթագիւղ, տիրացու Աւետիս ի Գուրուչէշմէ և Սերովրէ Խախմաճի ի Ղուլաթիա։

Պատմութեանս Ա. գլուխը փակելէ առաջ, «Տաճար»ի աղնիւ ընթերցողաց հետաքրքրութիւնը գոհացնելու համար ստուրիւ կը հրատարակենք՝ 1811 թուականին Յովհաննէս Պատրիարքէ տրուած 9 կոնտիններով հետեւեալ Կոնդակը, ուղղեալ ուր Դաս Դպրաց։—

Կանոնական Կոնդակ Դպրաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ,

Հաստատեալ երանաշնորհ Տեսուն Յոհաննիս սրբազան Արքեպիսկոպոսի և արտ-

զաւածաբան Պատրիարքի Կ. Պօլսոյ, խորհրդով և հաւանութեամբ աստուածասէր և գերապայծառ իշխանապետաց. տպեալ յամի Տեառն 1811 և ի թուականութեան Հայոց ՌՄԿ փետր. 5, ի տպարանի Ս. Աստուածածնայ:

Յիսուսի Բրիտտոսի ծառայ Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոս և շնորհիւ Ս. Հոգւոյն Պատրիարք մեծի մայրաքաղաքիս Կ. Պօլսի: Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն՝ ողջոյն Փրկչական՝ չնորհք առաքելական աստուածային բաղմապատիկ օրհնութեամբ եկեալ հանգիցէ ի վերայ ընտրեալ Դասուց պատուական Դպրաց համայն Ս. Եկեղեցեաց՝ մեծաց և փոքունց առ հասարակ մերս սիրելի զաւակացդ, կալ մնալ ձեզ ի ծոց Սուրբ Եկեղեցւոյ, սուրբ սրտիւ՝ անարատ հոգւով՝ պարզ մտօք՝ կատարեալ սիրով՝ մեծալ յուսով՝ արիարար և յօժարամիտ՝ առանց ծուլութեան՝ ահիւ և դողութեամբ սպասաւորել աստուածային պաշտամանց, ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ:

Որոյ տմնից սիրելի և օրհնեալ որդւոցս պատուիրեմ հայրական սիրով և գթութեամբ, ճանաչել իմաստութեամբ զաստիճանին ձեր՝ զոր ունիք՝ զբարձրութիւն, զպատիւ և զգործութիւն. զի դուք զօրէն հրեշտակաց հանապազօր կայք ի փառաբանութիւն Աստուծոյ ի մէջ Ս. Եկեղեցւոյ՝ իբր սուսմի հանդիսավեցեցեալ ահաւոր Աթոռոյ Ամնատուր: Երրորդութեանն. որպէս զի քաղցրանուագ երգով ձերով շարժեալիք զհոգիս հաւատացելոց ի ջերմեռանդ աղօթս առ Աստուած, որով և սիրտ մարդասիրին քաղցրացեալ՝ պատճառ լինիլիք հեղման շնորհաց և ողորմութեանն Աստուծոյ առ իւր որարածս, և Եկեղեցի Բրիտտոսի չքեղապարդ վայելչացեալ պսակեսցի անդրդուելի հաստատութեամբ: Վասնորոյ և միք և գերապատիւ իշխանապետքս, յարգելի իշխանք և առհասարակ ընդհ. ազգս մեր միշտ ունիմք զձէնջ զամենեցունցդ շնորհակալութիւն և յատուկ սէր, ինամք և յարգութիւն ըստ իւրաքանչիւր պատուոյ և յարգութեան ձերոյ: Հոգին Սուրբ Աստուած վարձատրեալ հո-

գեւոր շնորհիւ, փառաւորեացէ զձեզ զամենեւին. Ամէն:

Ապաքէն հայրախնամ սիրով շարժեալ ի խնդրոյ աստուածասէր և գերապատիւ իշխանապետոց՝ յօժարեցաք տնօրինել ձեզ նոր ի նորոյ զարժանաւոր կանոնս. զի հաստատեսցի ի ձեզ բարեկարգութիւն, սէր և երկնաւոր խաղաղութիւն:

Ուստի հոգեւորական քարձու իշխանութեամբ մերով սահմանեալ, հրամայեմք ձեզ սիրելի որդւոցս՝ զգասակարգութիւն կառավարութեան ձերոյ միշտ ունել այսպէս:

Դիտաւջիք տմնեքեան, զի ի վերայ ամենայն դպրաց զլուս և իշխող է մեծապատիւ Դպրապետն, զոր յատուկ կոնդակաւ հաստատեալ՝ ըստ հրամանի կոնդակին մերոյ պարտիք ամենեքեանդ միշտ յարգութիւն, պատիւ և հնազանդութիւն նմացունել. և ապա իւրաքանչիւր ձայնի Ձայնապետն՝ զաստուգութիւն ժամատացն և թիկնապանն, որք միանդամայն ժողովեալ միարան սիրով պարտիք հոգալ և տնօրինել զկառավարութիւն Դպրաց դասուն. այսինքն ձայնապետք և թիկնապանքդ ի միասին եղբայրական սիրով ընտրեալ կացուցէք զգործակալս ձեր՝ զգանձապետ, և զայլն ըստ կարգի. և զհամայն հաշիւատարին մի անգամ տեսեալ, զիտաւջիք զեւս և զմուտս՝ զարգիւնս՝ զիրաւունս և զձախս բոլոր դպրական հասից. և ի զբարութեանն ստորագրեցէք ըստ կարգի ձայնապետքդ և թիկնապանքդ: Եւ յորժամ հարկաւորի ընտրել զնոր Միւթէվէլլի զբարական վախճֆից, որոշեցէք զարժանաւոր չորս դպիրս՝ ի ձայնապետաց և երկու ի թիկնապանաց. վիճակս արկէք ի վերայ չորեցունցն, յորոյ անուն ելցէ վիճակն, նա՛ ելիցի Միւթէվէլլի այնր ժամանակին: Իսկ զառհասարակ զկառավարութիւն Դպրաց Դասուն պարտ է աւնել ըստ հետեւեալ ինն կանոնաց:

Արդ՝ համայն Դասք Դպրաց ունին զհանդէս ի յերկուս տառանս՝ հրապարակական և առանձնական, ըստ որոց որոշի և հանդիսաւորութիւն դպրաց: Հրապարակական հանդէսն է աստեան սուրբ Եկեղեցւոյ, ուր կատարի աստուածային պաշտօն ժա-

մերդուծեանց : Առանձնական հանդէսն է ի պահարանի ժողովը դպրաց, ուր ընտրեալ անօրինի բարեկարգութիւն դպրաց դասուն : Ուստի ըստ երկուց հանդիսաւորութեանցս պատշաճաւորեալ սահմանեմք զկանոնքս :

Կանոն Ա. — Ի հրապարակական հանդիսի յատեան սուրբ եկեղեցւոյ ի մէջ դասին՝ քաղցրանուագ և համեղածայն դպիրքն ունիցին զառաջնութիւն և զյարգութիւն . քանզի այս ատեան Ս. Եկեղեցւոյ՝ է հաւաքումն ընդհանուր Ազգիս, ուր հանդիսացեալ կանգնին աստուածային Քահանայակետք՝ Եպիսկոպոսունք՝ Վարդապետք՝ Քահանայք և համայն եկեղեցականք . այլ և զերապատիւ իշխանապետք՝ յարգոյ իշխանք և առհասարակ օրհնեալ ժողովուրդք, որք ո՛չ խնդրեն զմեծութիւն և զաւագութիւն դպրաց, այլ զքաղցրութիւն և զհամեղութիւն երգեցմանց . զի քաղցր և հաւմեղ ժամերգութեամբ միայն լինի Ս. Եկեղեցւոյ շքեղութիւն և պայծառութիւն և բոլորքի աստուածապաշտութեան շերմնաւորութիւն . իսկ անտխորժ տղեղ ձայնիւ չարժին լսողք ի տաղտկութիւն, գուցէ և յարհամարհութիւն իսկ երգողին . և չիջանի սէր Աստուածային պաշտաման : Ապա ի մէջ դասին յատենի սուրբ եկեղեցւոյ՝ զեղեցկածայն դպիրք միայն երգեսցին . իսկ բաղաձայնք թէ և մեծամեծք և աւագագոյնք իցին, քնաւին լռեցին :

Կանոն Բ. — Զառանձնական հանդիսի՝ յորժամ միայն դպիրքդ ժողովիք ի պահարանի, հարկ և պատշաճ է՝ զի մեծագոյն և աւագագոյն դպիրքն ունիցին՝ զառաջին տեղի՝ զարժանաւոր յարգութիւն և զիրաւունս . իսկ փոքրագոյնք և նորահասք՝ թէ և զեղեցկածայն իցին, հարկիւ տնիցին զպատկառ խոնարհութեան և զհնազանդութիւն մեծազունից և աւագագունից . ամենայն բանից յարգութիւն և հպատակութիւն ցուցանելով :

Կանոն Գ. — Զամենայն կիւրակէի՝ մեծապատիւ Դպրապետն ութեքին ձայնաւետք և թիկնապահք ժողովեալ ի միասին նստէ՝ ի պահարանի . եղբայրական սիրով խորհեցէ՝ զհարկաւորն պաշտօնին ձեռոյ, և համակամութեամբ միաբանեալ

հաստատեցէ՝ զրարեկարգութիւն՝ դպրաց դասուն . արդար զատուտանաւ դատեցէ՝ զյանցաւորն, անաչառ յանդիմանութեամբ սատեցէ՝ զստահակն . և արժանաւորոց՝ զապաշխարանս եղեմ, զղղջացեալն եղբայրական սիրով ընդունեցէ՝ զյանցանայն՝ ըստ արժանեացն պատուեալ մխիթարեցէ՝ և թէ ծանր յանցանք և գործ գատնիցի, պարտաւորիք ծանուցանել բարձրագոյն ատենի :

Կանոն Դ. — Դասագլուխ ժամասացն պարտի լինել զեղեցկածայն քաջալարժ դպիր . երկրորդ ժամասացն անաւացէ առաջին ժամասացին, և երրորդն հետեւեցի երկրորդին . և այսպէս ամենայն դասակիցք ըստ զատակարգութեանն հրամանաւ վերնոյն սկսեցին և երգեսցին ամենեքին ներդաշնակութեամբ, զձայնն ցածուն հետեւեցուցանելով ի նիւքոյ ձայնի սկսողին . Թոսինքն մի՛ ոք կոչեցէ բարձր քան զսկրստոյն, և մի՛ երկարեցէ զկնի աւարտման սկսողին :

Կանոն Ե. — Ամենայն դպիրք՝ պարտին լսել քահանայական բառից՝ մտիթանաց, և զկնի աւարտմանն սկսանիլ, և պս ևս մանաւանդ ի Ս. Պատարագ, որի սարկաւագունք և դպիրքն պաշտօնեայք են պաւտարագիչ քահանային՝ սարկաւագն զգուշութեամբ նկատէ և զկատարումն խորհրդոյն . և դպրաց հարկ է հայիլ և հետեւիլ սարկաւագին . որոց միանգամայն սարկաւագաց և դպրաց պարտ է զյորդոր և զծանր երգեցմունս յարմարիլ բանից պատարագիչ քահանային, և սպասել զի պատարագիչն վճարեացէ զլաւն, և ասպս սկսանիլ :

Կանոն Զ. — Ամենայն ժամերգութիւնք պարտին ըստ պատուոյ ուուրն և ըստ վաշխութեան բանին երգել . այսինքն ի հասարակ աւուրս միջակ ձայնիւ՝ յորդոր աւսոցուածովք, յապաշխարութեանն ուուրն պահոց՝ ողորմագին մեղմ կղանալաւ, և յերեւելի աւուրս՝ բարձր և ծանր կղանալ կելով, ըստ ամենայնի հրամանաւ ժամօրհնողին . և մի՛ ոք հակառակ գրելոյս ըստ ախորժակին անբանաբար զծղմնեացէ : Մի ոք զհոգեւոր երգան յեղափոխեացէ ըստ

մարմնաւոր երդոց, զի ի փոփոխիլ եղաւ նակին՝ փոփոխիլ և դիտաւորութիւն լսողին, և չիջանի ջերմութեանդութիւն ժողովրդեան:

Կանոն Է. — Սաննայն ձայնապետք և թիկնապաշտ յաւուր ձայնի իւրեանց պարտին անխափան գտանիլ ի Ս. Եկեղեցին. զի առանց պարսաւանցոց կատարեցին զպաշտան իւրեանց, ինքեանք՝ կամ ի ձեռն քաջամարտ հմուտ. դպրաց. այսինքն զձայնաւորոն համեղաձայնքն երգեսցին, և զթիւ ընթերցուման ուղիղ աւուգանութեամբ կարգացողքն ընթերցցին, և մի՛ ոք առաւել քան զկար իւր ձկանալ խոյտառակեսցի:

Կանոն Ը. — Ի՞ ձայն գրելի զմանկունան արժան է փորձել ի ժամանակս ինչ. որք թէ գացին պատկառ և պարկեշտ վարութ, հլու հնազանդ բարութ, և ուղիղ աւուգ յընթերցուման, և յօժարակամ յանձնառու զպրական կարգաց և կանոնաց, սպաս հաւանութեամբ ժողովոյն գրեսցին յարժանաւոր ինչ ձայնի, և յանձնեալ ձայնապետին և թիկնապաշտին՝ կրթեսցին ի բարի. դաս առեալ վարժեսցին ի շարականս, ի սուղս և ի մեղեդիս, և զամենայն աւուրս փոխն ըստ ձայնին կարգաւ առաջեն:

Կանոն Թ. — Վերջինս ըստ կարգի և առաջին ըստ սատուածային հրամանի և սրբազան հայրապետացն կանոնաց՝ ա՛յս է, զի ամենայն դպիր՝ թէկու առաջին ժամանակ և ձայնապետ ինչ, հարկիւ պարտաւորիլ ցուցանել զհնազանդութիւն բարձրագոյն աստիճանաւորաց եկեղեցւոյ. այսինքն խոնարհիլ, վարդապետաց՝ քահանայից զա՛մն համբուրել, և աւագ սարկաւազաց զարժանաւոր յարգութիւն և պատիւ մատուցանել՝ ո՛ւր և պատահեսցին, մանաւանդ ի մէջ Ս. Եկեղեցւոյ. մի՛ և մի՛ լիցի քնաւին խօսիլ՝ կամ լրբարար համարձակեալ յանդիմութեամբ կարգադրել զպաշտօն նոցին:

Ձայս կանոն հա՛րկ է և ձեզ պահել և ի մէջ միմեանց. իբր զի փոքրագոյն դպիրքդ թէկ հրեշտակային եղանակս ունիցիք, միշտ պարտական էք պատկառանք յարգութիւն պատիւ և խոնարհութիւն առ-

նել մեծագունից և աւագագունից, ո՛ւր և առանկեցէք. և մի՛ վասն պաշտօնին կամ գեղեցիկ ձայնի ձերոյ յանդգնեալ՝ լրբենի դիմօք համարձակ խօսեալիք առաջի աւագագունից. զի այնպիսիքն միշտ արհամարհեալ ստեղի են յԱռաւծոյ և ի մարդկանէ ըստ գրեցելուն, զլիւրս և զյանդուգն առաւել ատեսց Սատուած՝ քան զյանցաւորսն:

Բայց մեծամեծացդ և աւագագունիցդ ևս պատուէր տամք, ի խնամս սիրոյ ունիլ ձերովդ խոհեմութեամբ շահել զխորատագոյն. զի ո՛չ կարէ ակն տակ յձեռն՝ թէ չես ինձ պիտոյ. և դարձեալ զլուս յոտս՝ թէ չէք ինձ պիտոյ. քանզի Սատուած խոհեմաց զմարմինն. նուազին առաւել ևս պատիւ ետ, զի մի՛ իցեն հերձուածք ի մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմեանց հագացեն անդամքն: Որովք ի պատիւ զմիմեանք ելեալ՝ յամենեցունց յարգեսցին Սաւաքեղական պատգամքս. — Որդիք, հաւաքանդ լերութ ծնողաց ձերոց, և թէ Հա՛րք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր:

Վերջապէս հարկիւ պատուիրեմ ամենեցունցդ՝ Աստուածային սիրով՝ զիս և զմուսս՝ զնախիլ և զկանգնիլն ձեր ի շուկայս, ի փողոցս և յամենայն տեղիս, յարմարեցէք հրեշտակային պաշտօնին ձերոյ. պարկեշտ հանդերձիւ՝ ամօթխած երեսօք չիջեցէք. ի զինեմունս մի՛ երթայք, ի խահվէս մի՛ նստիք, յոնպարկեշտ զբօսարանս և յառասպել թէաւորոն (ի մէջտան օյնիս) մի՛ դառնիք. մանաւանդ ի մէջ սուրբ և կեղեցւոյ բնաւին տաճկերէն մի՛ խօսիք:

Սպաքէն հոգեւորական բարձու իշխանութեամբ մերով վերսին հարկեալ պատուիրեմք ձեզ՝ քանաւոր ստարակաց՝ սիրելի և օրհնեալ դպրաց համայն Ս. Եկեղեցւոց, մեծաւ սիրով և նաղանդութեամբ յառաջ տանիլ զայս հոգեպառազամ կանոնադրութիւնքս, ամենեւրին ի ձեռս և ի ծոցս ունել, անձանձիր կարգալ և զհրամայեալս անպակտս կատարել:

Հա՛ւպա՛ սրբեցէք զանձինս ձեր յամենայն արատոյ, կատարեցէք սրբութեամբ զպաշտօն ձեր տհաւն Սատուոյ, մի՛ գանձանց և եթ ինդրէք, այլ և զընկերին, զի

երկնաւոր խաղաղութիւնն հաստատեցի ի հողիս ձեր: Որովք որպէս աստ յերկրաւոր եկեղեցիս զինուորեալ՝ պայծառացուցեալ քաղցրածայն երգովք փառաւորէք զԱստուած, արժանի լինիք ամենեւին և յեկեղեցիս անդրանկաց յարքայութեան երկնից, ընդ ձեզ պաշտօնակից հրեշտակաց փառաւորիլ յԱստուծոյ յանդրաւ, յաւիտեանս ամէն:

ՌՄԾԸ, Մարտի 21

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶՆՑ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

(Շարունակելի)

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ս. ԳՐՈՅ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ՈՋՆԻ.—(Եսայ. ԺԴ. 23, ԼԴ. 11. Սոփ. Բ. 14). Երբ. (Քիփիօտ), Յուն. (Էքրինոս), Կ. Բ. *hystrix cristata*.

Պաղեստինի և Սուրիոյ բլուրներու և լեռներու ստորոտները, ամայի տեղուանքները շատ կ'գտնուի ոգնին. կ'անանի կեղեւներով, արմատներով, պտուղներով և բանջարեղէններով. իրեն համար գետնափոր ձեղքուածքներու մէջ բաւելիներ և խոռոչներ չինած է և հոն կ'ընակի երբ ուզէ առանձնանալ: Միւր տեղացիներէն կ'ուտուի և ծանօթ է Պաղեստինի և Սուրիոյ բնակչաց խռնիւտս անուամբ: Ոգնին երկու ոտք երկայնութեամբ սրակտուց եւրախ մը և կարճ պոչ մը ունի. կռնակին վրայ և երկու կողմերը փուշով ծածկուած է. իսկ փորին կողմը փափուկ և խորտեալ մաղերով ծածկուած է. կրնայ իր մարմինը բոլորակ գնդակի մը պէս ամփոփել, զըլուխն ու ոտներն չնքս քաշել. ձմեռները գնտածել կ'կրորի և ինքնափոր ծակերու մէջ կ'ընանայ:

Ս. Գրքի մէջ յիշատակուած Երբ. ֆիփիփոս բառը արաբական խռնիւտս (=ողնի) նշանակող բառէն փոխ առնուած կ'ընկալէ Կեսեմիոս. իսկ Թրիպոլամ, Հուկթոն և ուրիշներ Երբ. քիփիփոտ բառը կ'ընթերցանեն

բոտոր (=bittern) որ տեւակ մը թռչուն է և կենդանարանութեան մէջ կ'իջուրի *bo-taurus stellaris* և *arobola minuta* անուններով:

1. Թրիպոլամ եւ Հուկթոն կ'պնդեն որ Երբ. բնագրին Եսայ. ԺԴ. 23, ԼԴ. 11, Սոփ. Բ. 14 համարներուն մէջ յիշատակուած ֆիփիփոտ բառը պէտք չէ բարգմանել ոգնի այլ բոտոր, քանի որ կ'ըսեն՝ 1. Ոգնին աւերակաց մէջ բնակող կենդանի չէ. ըստ այսմ փոխանակ կարդալու «արտեալ գերաշնորհ աւերակ զի բնակեցին ի նմա ոգնի», պէտք է կարդալ «բնակեցին ի նմա բոտոր»: (Ես. ԺԴ. 23):

—Բայց ասիկա հաւասարապէս կրնայ զիտել տրուիլ նաև բոտորին համար. բոտորը ճահճներու մէջ բնակող թռչուն մըն է և աւերակ տեղեր չտեսնուիր. աւելի սէղերու մէջ և ճահճային բնակութիւնը նախասիրած է. մինչդեռ ոգնին իր երկչոտ և խրոչող բնաւորութեամբ կ'առանձնանայ և կրնայ ընտրել այնպիսի վայրեր որ ամայի և աւերակ են. այսպէս զոր օրինակ Բարելանական (Ես. ԺԴ. 23) նինուէական (Սոփ. Բ. 14) կամ Եղեմական (Ես. ԼԴ. 11) Աւերակները:

2. Թրիպոլամ եւ Հուկթոն կ'աւելցնեն.—Երբ. ֆիփիփոս բառը պէտք է բոտոր բարգմանել վասնզի ոգնին չկրնար մագցիլ միջեւ սիւներու խոչակները, միջդեռ բոտորը կրնայ ելնել միջեւ խոչակները. ըստ այսմ փոխանակ կարդալու «հաւաչուս եւ ոգնի ի խոչակս նոսա ագցին», պէտք է կարդալ «հաւաչուս եւ բոտոր ի խոչակս նոսա ագցին»: (Սոփ. Բ. 14):

—Ճիշտ է որ ոգնին չկրնար մագցիլ միջեւ սիւներու խոչակները, բայց Ս. Գրքի այս համարը (Սոփ. Բ. 14) եթէ իր նախընթաց և յետագայ համարներով ուշիւ կարդացուի, պիտի տեսնուի թէ ոչ թէ կանգուն սիւներու խոչակներու ակնարկութիւնն մըն է որ կ'ըլլայ, այլ ինկած, կործանած, խորտակուած սիւներու համար է ակնարկուած. հետեւաբար ոգնին համար զիւրին պիտի ըլլար խոչակներու վրայ կ'ընէ:

3. Դարձեալ կ'ըսեն. Երբ. ֆիփիփոս բառը պէտք չէ ոգնի բարգմանել, վասնզի ոգնին չկրնար հնչեցնել ձայն այնպիսի ինչպիսի կ'յիշատակուի Սոփ. Բ. 14 համարին մէջ. «Բարբառ նոցա հընչեցի ընդ պատռեալսն». միջդեռ բոտորը կրնայ հնչեցնել. հետեւաբար ֆիփիփոս բոտոր բարգմանել աւելի ճիշտ է:

— Ստուգ է որ ողնին հնչեցնող ձայն
չկրնար ունենալ, սակայն այս անհարկուած
համարին մէջ «նոցա»ն բնագրական, սկզբ-
նական չէ յաւելուածական է: «Բարբառ»ը
անորոշ է. չափարկեր ողնի բարբառին.
ըստ այսմ պէտք է թարգմանել. «Հաւա-
լուան և ողնի ի խոյակս նորա ազգին.
բարբառ հնչեցէ ընդ պատուհանս... ևն.»:
Հայ աշխարհագրող ճիշտ թարգմանուած
է. «պատուհաններէն ձայն պիտի հնչուի»:
Հոգմին կ'ակնարկէ որ անդին լով կործան-
ուած, տապալուած օխանքու, քարերու
ամալի լուսամուտներուն մէջէն սարսափե-
ցուցիչ ձայն մը լսելի կ'ըլլայ:

4. Թրխսրամ եւ Հուկթոն յորոտդ առա-
կուրիւն մըն ալ կ'ընեն միջ քերիշով սա համարը.
«Եւ երից զնա ի քնակուքիւն ողնեաց եւ ի
ճանիս ջուրց», կ'ըսեն. ողնին չիւրաւ ջուրի
շնակներու մէջ մտնել, քայց բոսորը ճանհա ին
կենդանի մըն և եւ սեղեռու մէջ կ'ընակի. հե-
տեւաբար Եսայ. ԺԴ. 23 համարին ողնին պէտք է
բոսոր ըլլայ:

— Սոյն գիտալուծիւնը շատ արդարացի
պիտի ըլլար եթէ «և» չաղկապը չըլլար. և
քանի որ «և» չաղկապը կայ, այդ համարը
ուղիղ է հասկնալ ստալէս. «Բարբառնը պիտի
վերածուի ողնիներու յարմար ամալի աւե-
րակներու և ջուրի ճանիւներու»:

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ՆԻԻԹԵՐՈՒ ԱՌԱՏՈՒԹԻՒՆՆ հար-
կադրեց զմեզ այս անգամ եւս յետաձգե-
լու «Մամլոյ Արձագանգ»ը, որ անբաժան
մասը կը կազմէ մեր ծրագրին:

Այդ ծրագրին ամբողջական գործա-
դրումը կարելի չըլլար առ այժմ, թերթիս
վարչական գործերուն ոչ այնքան կանո-
նաւոր վիճակի մէջ մեզ յանձնուելէն. այդ
կանոնաւորումը մէկ քանի շաբթուան գործ
է պարզապէս, որմէ ետքը ի վիճակի պիտի
ըլլանք թէ՛ նիւթերու պետականութեան և
թէ՛ հրատարակման կանոնաւորութեան տե-
սակէտով ամէն կերպով գոհացնել բարե-
պաշտ ընթերցողները:

* Տեղւոյ անձկութեան պատճառաւ
հարկադրուեցանք նաեւ յետաձգել մարտ 20
Ծր. օր տօնուող հայ սուրբերու Յովհան
Օճնեցիի, Յովհան Որոտնեցիի և Գրիգոր
Տաթևացիի նուիրուած գրութիւն մը:

ԻՆՉՊԷՍ ՊԵՏԲ Է ԵՐԳԵԼ

«ՓԱՌԻ Ի ԲԱՐՁՈՒՆՍ»Ը

Երբ Տաճարի Ե. թուոյն մեկնարանա-
կան բաժինը կը կարդայի, հոգեշնորհ մեկ-
նիչ Հայր Սուրբին «Յիսուսի Ծնունդը և
յարակից պարագաները» յօդուածին վեր-
ջին մասերուն հետեւեալ պարբերութիւնը
ուշադրութիւնս գրաւեց. «Այսօրուան
Փառք ի քաղաքները՝ հրեշտակներու բերնէն
լուած այս փառաբանական երգին ընդ-
լայնուած ձեւն է, զոր կ'երգենք ամիսօր-
եայ պաշտամունքի միջոցին այնքան գեշ
և թաթախօրէն»։ Դժբախտաբար շատ չի-
տակ էր մեկնիչ Հայր Սուրբին սոյն խօսքը։
Իրաւունք ունէր այսպէս գրելու, քանի որ
ինք ալ փորձով գիտէր։ Եւ երբ խղճի
մտօք խորհիւք, պիտի տեսնուք թէ միայն
այս երգը չէ որ կ'երգենք «անյնաւ գեշ
ու քաղաքները»։ Մեր եկեղեցիներուն մէջ
շատ երգեր կ'երգուին կարծես Վրիլայն
երգուած ըլլալու համար. ինչպէս նաեւ
տեղի կ'ունենան Ս. Աւետարանի, աղօթ-
քի, Ս. աքիւղի թղթերու, մարգարէութեանց
ևն. ընթերցուածներ, որոնք իբրեւ թէ
միայն կարգացուած ըլլալու համար կար-
դացուելու սահմանուած ըլլային։ Բացա-
ռութիւնս յարգելով, մեր այս ըսածը դառն
ճշմարտութիւն մ'է, որուն վրայ կ'արժէ
խորհիլ։ Ինչո՞ւ համար երգենք, աղօթենք,
կարդանք և արարողութիւններ կատարենք
այնպէս մը, որ իրաւունք ունենայ ժողո-
վուրդն ըսելու թէ «գեշ եւ քաղաքները»
կատարեցին։ Հերի՛ք որչափ մեր վրայ խօ-
սեցնել տուինք մեր իսկ արարքներով. բա-
ւական է. ջանանք օրինակելի ըլլալ և չի-
նիլ՝ մեր վարք ու բարքով և խօսքերով.
ջանանք կանոնաւորել մեր երգեցողութիւն-
ները. գիտնանք դնել անոնց մէջ հոգի և
զգացում, ինչպէս նաեւ մեր ընթերցու-
ածոց մէջ։ Գիտնանք թէ ի՞նչ է երգածնիս,
կարդացածնիս և կատարած արարողու-
թիւննիս. զգուշանանք թաթախօրէն ան-
գիտակից հետեւողութենէ. երբ կ'երգենք,
պէտք է ունենանք արուեստին սէրը՝ եր-

կիւղած . երբ կ'աղօթենք և կ'ոգնենք կարգանք, պէտք է հաւատոյ սիրով վառուած և զգածուած ըլլանք, և երբ ո՛ր և է կրօնական արարողութիւն կը կատարենք՝ դիտանաք թէ ի՞նչ ազդեցութեան և տպաւորութեան տակ պէտք է գտնուիլ: Մեր երգածներէն կամ կարդացածներէն նոյն մէնք պէտք է ազդեցինք և զգածուինք, որպէս զի նոյն ազդեցութեան և զգածման կարենանք ենթարկել նոյն մեր ունկնդիրները՝ որով և չինիչ տպաւորութիւն մը և ազդեցութիւն մը յառաջ բերած՝ կ'ըլլանք իրենց վրայ: Մեզ եկեղեցականացս չիճաւ կամ է տաճարէն վերենք դէպ ի բարին և ճշմարիտը: Չանանք մեր օրոյն կոչումն արդարացինդ վիճակի մը մէջ գտնուիլ. վերջապէս Չանանք՝ իրրեւ հոգեւոր պաշտօնականներ, մեր կարողութեան ներած չափով մեր կոչման գիտակցութիւնն ունենալ և ըստ այնմ շարժիլ և գործել: Երաւի անոր որ պարտականութիւնը կատարած ըլլալու գիտակցութեամբ միտքարուած կը զգայ ինքզինքը:

ԱՐՄԱՆԱՍ ԲՆՆՅ. ԷՊԷԿԱՆ

ԴԻՏԱՂՈՒԹԻՒՆ ԽՄՐԱԴՐՈՒԹԵԱՆ


Մեր արժանաչորէն եղբայրն ի Քրիստոս շնորհաւորելի է իր խորհրդածութեանց համար՝ տնիքան պարզ անկեղծութեամբ մը արատայատուած, որքան արդարացի են իրաւամբ եկեղեցական բոլոր երգեցողութիւններն և ընթերցումներն ալ պէտք է իրատարուն թութակօրէն, անգիտակից և անտարբեր ոգիով մը, ոչ ալ, մտնուանդ, անհասկանալի ըլլալու անտիճան արագութեամբ մը, լարտելով պարզապէս: Իրաւ է որ մոզովիդ ային խուան բաղմութեան ներկայութեամբ հոգեւորական պաշտօնացիքի մը հոգ կը տանին կրօնական լրջութեան մը վայելուչ հանգիստաւորութեամբ կատարելու տրարողութիւնները: Բայց ինչպիսիք կը տարբերի լուր օրերը, երբ ժողովուրդն իր բացակայութեամբ կը փայլի և եկեղեցւոյ պաշտօնացիք — հաղուողէս բացառութեամբ — միակ մտահոգութիւն մ'ունին: — Ես'ւտ աւարտել պարտողու

թիւնները: Թերեւս յառաջիկային առիթ ռենկանք մտնուոր յօգուածի մը նիւթ ընելու այս աղեղ ունակութիւնը, որ մեր եկեղեցիներու ամայացման պատճառներէն մէկը կրնայ նկատուիլ:

Առ այժմ կ'աղենք չեղաւ մասնաւորապէս «Փառք ի բարձրեւն»ը արժանաւայել և երկիւղած լրջութեամբ մը երգելու պէտքը: Հայ եկեղեցւոյ Ս. Հայրերէն Յովնան Օճնեցի իմաստասէր կտիպիկոսը (Ը. դար) որուն աօնը կը կատարուի Ես. օրը (մարտ 20), կը պատուիրէ հոգեւոր արթնութեամբ պատրաստուիլ «զհրեշտակային ձայն միանալու նուաղել»։ Իսկ Անձեւացեաց Խոսրով եպիսկոպոսը՝ Ս. Գրիգոր Նարեկացիի հայրը՝ (Ժ. դար) «Ժամագրքի մեկնութեամբ» մէջ ջերմ հաւատացեալի խորունկ չեղտով կը խօսի այս հրեշտակային օրհնութեան վրայ: Եանդիմանութիւններ ուղղելով իրեն ժամանակակից ագէտ երգիչներուն որ ճիշտ հիմակուան կարգ մը տիրացուներուն նման կը լարտեն եղեր նոյն վսեմ օրհնութիւնը: «Փառք ի բարձրեւն»էն առաջ երգուած օրհնութիւններով մարդիկ երկրաւորներու հետ կ'օրհնեն զԱստուած և երկրի վրայ են, իսկ այս օրհնութեամբ երկրաւորներէն երկինք կը բարձրանանք և հրեշտակներուն ձայնակցելով կ'օրհնենք ամենասուրբ Երրորդութիւնը: Ուստի պէտք է ճանչնալ այս աղօթքին և անոր իմաստովից բարձրագոյն փառաբանութեան վրասեմութիւնը:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ. — Գահիրէն Ալին. Ստեփան էֆ. Գալէնտէրեան 1 տարեկան Տաճար կը նուիրէ Ակնայ Նարեկեան վարժարանին: Նոյնպէս Գահիրէն Ալին. Ն. Մ. Աղալարմ էֆ. 1 տարեկան Տաճար կը նուիրէ Աքարկիլի Ս. Թարգմանչաց ուսումնարանին:

Կը հրաւիրենք բարեսէր ողջօրինները՝ այսպիսի նուիրատուութիւններով սատարել գաւառի հեռաւոր վարժարաններուն մէջ կրօնաթիւնութեան խռանդն արծարծուելուն:



ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Զինուորագրութեան շուրջը. — Դանդաղ եւ
անորոշ գնացք. — Կասկածոս վիճակ գա-
ւառներու մեջ. — Կիլիկեան ճագնասը.

Յուսպից գործունեութիւններ. —
«Ազգանուէր»ը, «Դպրոցասիրաց»ն
եւ «Միացեալ»ը. — Հայոց Alliance
Israéliteր:

Անցնող տասնութիւնը րիտիկին, ազգային-
վարչական չքմանակին մէջ կատարուած ի-
րողութիւնները՝ տեւական եւ հիմնական
թրդիւնքով՝ չունեցան ուշադրաւ եւ նշա-
նակելի հանգամանք: Իրերը կը շարունա-
կեն ընթանալ նոյն դանդաղ զնայքով:
Զօրակոչը պահիկ մը դադար առած է,
զբաղելու համար բողմութիւն խնդրարկու-
ներու տարիքի սրբադրութիւններով, որ
կը կատարուին բոս առաջնոյն, համաձայն
Մարդահամարի Կանոնադրին արամադրու-
թեանց(*), այն է զիտարաբար երկու
վկայի ունկնդրութեամբ եւ ենթակային
անձնական հանգամանքն ուշադրութեան
առնուելով, եւ պաշտօնական թուղթերու,
այն է Թաղ. Խորհրդոց կամ Պատրիար-
քարանի կողմէ տրուած ծննդեան վկայա-
գրերու այն ատեն միայն զիմուելով, երբ
միւս երկու միջոցներ բաւական չեն ըլլար
համոզում գոյացնելու, եւ տարակից կը
մնայ միտքերու մէջ՝ ներկայացողներու
տարիքին մասին: Այս եղանակը Զինուորա-
գրական Յանձնաժողովներու ուղղութիւնն
առաջին օրէն, եւ նոյնն է հիմակ ալ որ Ի-
տալի ժողովները կը քննեն ասորիքի
խնդիրները, ինչպէս յայտարարեց մեզ նոյն
ինքն Գեղ. Իսմայիլ Հազար պէյ, Զինուո-
րագրական Կեդր. Յանձնաժողովի նախա-
դար:

(*) Այս տղերք շարուած էին արդեւ, երբ
բերքերու մեջ կարգացիմք թէ ելմական 1299 եւ
1300 տարիները ծնողներուն զօրակոչը որ պահ
մ'ընդհատուած էր, կ'վերսկսի մաս 20ին, եւ
վնասակա պիտի վերջանայ մաս 31ին, որմէ ետք
ներկայացողները՝ զինուորաբեկ փախած նկատ-
ուելով օրինական խստութեանց պիտի ենթարկուին,
ստանձնաւարտութիւններ չպիտի ունենան:

Հետեւորար, զինուորական Մարմնոց
սկիզբէն ի վեր՝ մասնաւորապէս Բրիտանեայ
զինուորագրողներու նկատմամբ ցուցուցած
թոյլատու, փափկանկատ վարմունքէն դուրս,
որուն համար երախտագրութեան հարկ
մ'ունինք մատուցանելու, ոչինչ կայ իրա-
պէս բարեփոխուած: Եղած խնդրանք-
ները նկատի կ'առնուին, երբ օրինական
ձեւակերպութեանց համեմատ կը կատար-
ուին: Ուստի հին ու նոր բոլոր զինուո-
րագրեալները ժամանակ չունին կորսնցնե-
լիք: Իրենց բոլոր առարկութիւնները, եթէ
ունին, պէտք է պատշաճ ըլլան օրէնքի
պայմաններուն: Եւ այդ օրէնքը՝ ցարդ
գտնուածն է, մինչեւ այն ատեն որ Օսմ.
Խորհրդարանը նոր օրէնք մը քուէարկէ
զինուորագրութեան, աւելի արդար, եւ
ժամանակի ու միջավայրի պահանջունե-
րուն աւելի պատշաճ: Ընդ այս խոստով
չըջարեալան մը կարգացինք լրագրաց մէջ,
Յունաց Պատրիարքարանի կողմէն առ Օր-
թօտըս ժողովուրդն ուղղուած: Փափա-
քելի էր որ Ազգային Պատրիարքարանն
ալ նոյնն ընէր Հայ ժողովրդեան, չըջարե-
րականով մը պաշտօնապէս ղեկուցանելով
ժողովրդեան՝ ինչ որ պէտք է զիսմայ
ամէն մարդ: Ուրիշ չըջարեալան-հրահանգ
մը պէտք է ուղղուէր Պատրիարքարանի
կողմէ՝ Զինուորագր. Յանձնաժողովներու
մէջ ի դիմաց Հայ ազգին ներկայ գտնուե-
լիք եկեղեցական եւ աշխարհական անձնու-
ւորութեանց, որոնք՝ չեն զիտեր թէ ինչ
ուղղութեամբ պիտի շարժին, եւ ո՛ր աստի-
ճան պէտք է պիտեն Պատրիարքարանի իրա-
ւասութեանց վրայ:

* Նոյն դանդաղ եւ անորոշ գնացքը՝
** Նոյն դանդաղ եւ անորոշ գնացքը՝
յարտարեալան եւ զուտ ներքին կեանքի
վերաբերեալ ուրիշ խնդրոց մէջ: Արեւել-
եան գաւառներէ ոմանց մէջ անապատաւու-
թեան երկիւղները կը շարունակուին միշտ,
հակառակ շարժուն բանակներ օղակաւ
խնդրոյն նկատուման խոստումին: Միւս
կողմէ Զէյթունի մէջ հետապնդումներն ու
հալածանքը կը շարունակուին Հայերու դէմ,
մինչ Ատանայի մէջ ընդհանուր ներսւմ
հաշակելու համար կ'ըսուի թէ նորէն զի-
մում կղեր է Բ. Դուռը, որ անշուշտ լուրջ

նկատողութիւնէ մը անցնելէ ետքը կրնայ վճռական որոշում տալ անքան կանխահաս խնդրանքի մը՝ ի նպատակ այնպիսի ոճ-րագործներու որոնց արձակումը վերջին հարուածը պիտի ըլլար Կլիկիոյ արդէն իսկ հալածուած հայ բնակչութեան, և այս՝ այնպիսի տոնն մը, երբ անօթութեան, առւայտանքի սրտակեղեք լուրեր կը հասնին միեւնոյն տեղերէն, զիստորաբար այն պատճառով որ պետական նպաստները դադրած են, և ազգային չըմանակի մէջ հաւաքուած նպատակները չեն բաւեր դարմանելու անհուն կարօտութիւնը:

Ահա՛, մէկ քանի տողերու մէջ խտացուած, ազգին այսօրուան վիճակը, տխուր, սաղմոսապալի, որուն համար Ազգ. Վարչութիւնը պէտք է ցուցնէր իր բոլոր կուրծի ու սրտցաւ փոթեռանդութիւն մը, կտրուկ կարգադրութիւններ ընելու, լուրջ և ազգու գիմումներով առ Օսմ. Սահմանադրական կառավարութիւնն՝ վճռական դարձնաւ մը ձեռք բերելու իրաց սրտում կայութեան: Դժբախտաբար ճիշտ հակառակն է որ կ'երեւայ վարչական չըմանակներու մէջ, և Ս. Պատրիարքին անակնկալ տկարութիւնը կուգայ խանգարել գործերու կանոնաւոր չարունակումը, և օգը ցընդեցնել հեռաւոր թէ մերձաւոր չըմանակներու մէջ ծնունդ առած յոյսերը:

*** Միակ ուրախագիտ իրողութիւնը զօր կարող ենք գոհութեամբ մատնանել, կրթական և բարեգործական Մարմնոց գործունէութեան սահմաններուն ընդլայնումն է, զոր կարող կ'ըլլան ի գործ դնել չնորհիւ ժողովրդային ամէն խաւերու կողմէ բացարձակապէս չեղոյ, և իրապէս բարեգործական ու կրթական այդ ընկերութեանց հանդէպ: Ուրախութեամբ կարգացինք թերթերու մէջ թէ Ազգանուէր Հասցեահաց Ընկերութիւնը, արդէն իսկ վաւերացուցած է եւ գործադրութեան զինել յանձնարարած՝ Կարնոյ մէջ վարժանիոց մը բանալու ծրագիրը: Մեր ազգային կրթութեան գործը ծայր աստիճան գանգազեցնող պարագան ո՛չ այնքան ծրագիրներն են, և ոչ իսկ դրամական միջոցներու չգոյութիւնը. այլ առաւելապէս սեռեցիներու

բու եւ մանաւանդ ուսուցչութիւններու տոտար մեծամասնութեան անկարողութիւնը, անյարմարութիւնն է իրենց նուիրական պաշտօնին: Ուսուցչուհիներ գիտենք որ, մէկ-դի թողլով մանկավարժական նորագոյն մեթոտն ու սղոց հոգեբանութիւնը, — որոնց անգէտ են բոլորովին —, չգիտնալով իսկ այն տարրական գիտելիքները զորս պարտին սորվեցնել ազգին զաւակներուն, և պարզ ուղղադրութիւն մը անգամ չունին: Հետեւապէս չնորհաւորելի է Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը, որ կեդրոն գաւառի մը մէջ վարժանիոց մը բանալու գեղեցիկ գաղտնիքը կ'ունենայ, հիմնական ու հաստատ կռուանի մը վրայ դնելով իր երեւմին փայլուն գործունէութեան շարունակութիւնը:

Ազգանուէրը այս կերպով գաւառի մէջ ալ կը տարածէ այն դարձը, զոր ուրիշ նոյնքան համակրելի մարմին մը, Գալուստէր Տիկնանց Ընկերութիւնը, ըրած էր ու կ'ընէ մայրաքաղաքին մէջ: Ամէն անոնք որ այցելած են այս վերջնոյն ի Գումգաւիտ վերաբացած վարժարանը, ջերմ չընորհաւորութիւններ ունին այդ ընկերութեան ժրջան անդամուհիներուն, որ տան և հինգ տարուան բռնի դադարէ մը ետքը նորէն սկսած են նախկին ոգեւորեալ դարձունէութեան, և յուսալից են մօտաւոր ապագայի մէջ գնահատելի արդիւնքներ ցուցնելու: Վարժարանը, որ արդէն իսկ կազմած է իր կարգերը, կրկնորդական վարժարանի մը ծրագիրն ա՛նի գրեթէ, միջին, բարձրագոյն և լրացուցիչ չըմանութիւն: Աշակերտուհիները, գաւառային գանդան անկիւններէ և զիստորաբար Կլիկիայէն հաւաքուած ուշիմ սղջիկներ ընդհանրապէս, կը պատրաստուին կրթական եռանդուն մշակներ ըլլալ, իրենց ենթարկուած անաւոր վիշտերը, զրկումներն և տուայտանքները մոռնալով հիմա՛կ ուսանելու և ապագային՝ ուսուցանելու անուշ պարտականութեան կատարումին մէջ: Ուսուցչական ընտրեալ խումբ մը՝ մասնաւոր հաճոյքով մը կ'ընտանանդէ ազգային — և միջազգային — կրթութեան բոլոր անհրաժեշտ տարրերն այդ մատաղատի պարմա-

նուէրներուն, որոնց դէմքին վրայ նկարուած կ'երեւայ իրենց հասակին անհամապատասխան լրջութիւն մը:

Կեդրոն թաղի մը մէջ, Ազգային Պատրիարքարանին այնքան մօտիկ հիմնուած այս տիպար հաստատութիւնը որ նախարարական գնահատութեան և քաջալերանքի ալ արժանացած է՝ ինչպէս կը յիշուի, պէտք է նոյնքան մօտիկ ըլլայ ամէն Հայու սրբոյն, և գործնական օժանդակութիւն գրտնէ ամէն կարգի ազգայիններէ:

Միացեալը, արդէն իսկ գործադրելու սկսած իր կրթական առողջ և հիմնաւոր գործունէութիւնը, Կարինի մէջ գեղատնտեսական ճիւղի մը հաստատումէն ետք, նոյն բանն ընել որոշած է Կիլիկիոյ մէջ ևս, այնտեղի վարժարաններուն համար տրամադրելով գեղատնտես մշն ալ, որ ի մօտոյ կը մեկնի այն կողմը, սկսելու համար գիւղատնտեսական գործնական սկզբունքներու ծաւալման, որուն այնքան պէտք ունի դաւառի հայ ժողովուրդը, պահելու համար իր այնքան ճիգերով ձեռք բերած զիրքը, և հաստատուն կուտան մը գանձելով տնտեսական հողին վրայ, առանց որու չուտով պիտի խուէր անկէ, առանց «սուրի և հուրի» պէտք տեսնուելու, և շատ չանցած ստրուկը պիտի ըլլար իր շուրջը գրտնաւորներուն: Ահա՛ հիմնական գործ մը, որ դրամով կը դառնայ, և վստահ ենք թէ ազգը չպիտի զլանայ այդ դրամը, ի՛ր իսկ վերականգնումին համար:

* * Բայց կիսամեակին ամէնէն խրախուսական լուրն է Եգիպտոսի «Հայկական բարեգործական (նկերութեան)», Հայոց Alliance Israélite-ին, Կ. Պոլսոյ մասնաճիւղին ալ վերջապէս կազմուիլը, աջակցութեամբ Վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորաառնկեանի: Հոյակապ գտած արդարեւ, որ ճշմարտապէս Ազգային-բարեարարի մը, Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի նախաձեռնութեամբ կառմուած, նախահիմնական դեր մը կատարեց հայկական շրջանակին մէջ, հասնելով ո՛ւր որ ստիպողական պէտք մը կայ, ըսփոփելով տառապանքները, հա՛ց տալով սովեալներուն, ու նպատակելով տնտեսական և խմորական զարգացման հաւասար

րապէս: Առաջադրուած նպատակին գերազանց օգտակարութիւնը, և ամէն կուսակցութենէ ու քաղաքական կազմակերպութենէ անկախ, լոկ բարեգործական ընկերութիւն մը ըլլալու պարագան կը շեշտեն մեծ կարեւորութիւնն այս Մարմնոյն, որ բարձր անձնաւորութեանց կողմէ կազմակերպուած, և ելմտական մեծ հաստատութիւններու վայել որոշ և հաստատուն պայմաններով ծրագրուած, ամէն երաշխաւորութիւն կ'ընծայէ բացարձակ վստահելիութեան: Ամէն հայ որ իրական օգուտ մը կ'ուզէ իր ազգին, թո՛ղ իր լուսման հասցնէ նոյն Մարմնոյն՝ ռազակի, կամ Պոլսոյ և զանազան զաւառներու մասնաճիւղերուն միջոցով: Այդ պարագը կը ծանոթանայ ազգին ամէն դասակարգներուն ալ վրայ, եւ կրօնականին, եւ տշխարհականին, հարուստին և միջակարհարին, կուսակցականին և չեղոքին հաւասարապէս:

Տաճարի խմբագրութիւնը վստահ է թէ եկեղեցականութիւնն ալ ո՛չ միայն իր խօսքի այլ գործնական օժանդակութեան բաւժինը կը նուիրէ այս ճշմարտիւ բարեարար Գործին: Փափաքելի էր միայն որ Եպիսկոպոս, Վարդապետ թէ Բահանայ Հայրերը, փոխանակ անշատաբար հասցնելու իրենց նուէրները, զանոնք ի մի հաւաքելով համագումարը զրկէին նոյն Մարմնոյն իբրեւ եկեղեցականութեան պղտիկ օժանդակութիւնը. և այս՝ ցուցնելու համար թէ Հայ եկեղեցականութիւնն անտարբեր չէ ազգին ցաւերուն, ինչպէս շատեր կը կարծեն այնքան անհիմն կերպով,

Տաճարի խմբագրութիւնն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ թերթիս արտօնատէր Արժ. Տ. Հմայեակ քահանայ էքսէրճեանի, որ գծախտութիւնն ունեցաւ կորսնցնելու իր երիցունին՝

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՍ ԷՔՍԷՐՃԵԱՆ

Հանգուցեալ տիկինը տիպար երիցունի մը և տիպար մայր մը եղած էր, և իր կորուստը մեծ վիշտ պատճառած է մեր Արժանաշնորհ եղբօր բազմաթիւ հպակորոգներուն: Երկնային մխիթարութիւն կը հայցենք ն. Արժանապատուութեան, զաւկաներուն և բոլոր պարագաներուն:

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

Կ Ա Մ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Բ Ա Ր Զ Ո Ւ Մ Ը

Ո Ղ Ա Յ Բ Գ Ո Ւ Թ Ի Ն

(Շարունակութիւն է. թիւ 16)

ՍՄԲԱՏ. (Շարունակելով). — Ա՛խ, Սիւն-
կաց իշխանը, փոքրիկ փորձանք մը չէ նա:
Սնիտհնութիւն, մի՛ժ անխտհնութիւն
էր նորա զէմ որ և է անհաշտ ընթացք:
Կը յիշէք անշուշտ բոլոր այն վնասները՝ զոր
Արծրունիներու տունը հասցուց Հայ ազգինը,
չնոյր յառակութիւնները՝ զորս...

ՎԱՐԴԱՆ. — Զորս Հայոց առիւծ-առ-
պետը պատկեց իր ատրաշէկ շամիրուովը:

ՍՄԲԱՏ. — Սիւնկոյ նախարարութիւնը,
յանձին Վասակի, աւելի աճաւոր թշնամի
մէ՛ է վերջակունքներու գահին: Ինչ որ Մեհ-
փոռման ըրաւ անխորհրդաբար և յայտնի,
Վասակ կ'ընէ գիւսանագիտութիւն և գաղտնի:
Վասակ յիմար մը չէ, պէտք է ասար լա՛ւ
համոզուած ըլլալ: Նա յաճախ խիստ պա-
շտօնականութիւնով կը գործէ, սատանի մը
չափ վարպետութիւնով կը կռիւ իր բոլոր
քայլերը և շատ խախտա գետնի վրայ պ
ոտք չդնէր: Եւ հարկւրին հարկւր վստահ
եմ թէ Վասակ Տիգրանի մէջ ոյժ մ'ունի
արդէն: Վերջին կտրուկ և յամառ որո-
շումները՝ իրեն արքանեակներու համախո-
հութիւնով՝ առի կը հաստատեն:

ԲՈՒՆՈՐԸ ՄԷ՛Կ բաց ի ԳիտՏէ. — Այո՛,
այո՛:

ՎԱՐԴԱՆ. — Եւ Տիգրանի այդ ոյժը
անձնանօթ չէ, Տէր, ստպեալ:

ՍՄԲԱՏ. — Այսպէս թէ այնպէս, եր-
կու գայլեր կան, մէկը ընտանի և միւսը
օտար, որոնք իրարու ձեռքէ յախչտակել
կ'ուզեն իրենց որսը՝ առանց զիրար մատ-
նելու ստալով:

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՊԱՐԳԵԻ. (Ներս մտնելով հեռ ի հեռ եւ
Վարդանի երկարելով քուղք մը). — Ահա՛
հայրենիքի դաւա...

ՎԱՐԴԱՆ. — (Բարկացոյց) Սը՛տո, շա-
տախօ՛ս, թուղթը բաւական է, դու
կորի՛ր:

ՊԱՐԳԵԻ. — Բու հոգուդ մատաղ,
Մամբիկոն ջան, եւ կը կորսուիմ, եթէ այդ
կորուստս Հայրենիքիս գիւտին պատճառ
կը լինի: Եւ ո՛վ պիտի չուզէր կորսուել
Հայրենիքի սիրոյն համար, մանաւանդ ա-
նունով Գիւտերը, որոնցմէ մէկն է հաւե
Վահունեակոյ նախարարը: (Գաղտնի եւ հեզ-
նական-վրեժխնդրական ակնարկով մը զը-
րոյիւր կը շարժէ):

ՎԱՐԴԱՆ. — Դե՛հ, հեռացի՛ր, դու քու
պարտքդ կատարեցիր: (Սրտհանդակը գը-
րոյիւր խոնարհեցնելով կը հեռանայ): Վա-
րդան մտովի կը կարդայ քուղքը, ուր ման-
րաւսան տեղեկութիւններ հաղորդուած էին
նախարարներու ժողովի մասին եւ ի միջի
այլոց ցոյց կը տուէր Գիւտի կատարած դերը
այդ ժողովին մեջ. քուղքը կարդայէ վերջ
կը ծաղիկ զայն եւ գրպանը դնելով, եւ պը-
ղէն զուգահեռ էի...

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՅՆՔ, ԲԱՏ Ի ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՍԱՀԱԿ. — Ի՞նչ, նոր տեղեկութիւն մը
առիր:

ՎԱՐԴԱՆ. — Ո՛չ, իմ պապ, այնքան
կարեւոր բան մը չէ: Այնպէս ի մէջ ամու-
նախատ և ցածագէ է այն մարդը՝ որ ինք-
զինքը կը կեղծէ: Բայց նկարագիրը չկար-
գախուի:

ԵՂԻՇԷ. — Դուք կ'երեւի վրդովիչ լուր
մը առիք:

ՎԱՐԴԱՆ. — Է՛հ, վրդովիչ... ըմբ...
վրդովիչ չէ ինձ համար և ոչ իսկ կարե-
ւոր, ինչպէս ըսի: Միայն սոսկախառնեցնել
թէ կեղծ դրամներ արժեքներու ճիգ թռ-

փողներ վաճառելու, զգուշութիւն, խարդախ-
ներ...

ՍՄԲՍ. — Մենք բոլոր այդ կեղծ դը-
րամները և զանազան վաճառողները կը
ճանչնանք, սիրելի սպարապետ. անոնք
ինքզինքնին միայն կրնան խաբել: Զանազան
սակայն մեղքերն մէջ չհանդիպիլ անոնց,
արթուն ըլլանք: Սպարապետ, դուք բան
մը լսեցիք նախարարներու խորհրդակցու-
թեան մասին:

ՎԱՐԴԱՆ. (Զայրացիտ) — Ոչի՛նչ. կըր-
նաք Գիւտ նախարարին հարցնել:

ՍՄԲՍ. (Գիւտի) — Եւ դուք ներկայ
էիք:

ԳԻՒՏ (Բից մը շփոթած) — Այո՛, առ ի
ցոյցս:

ՎԱՐԴԱՆ (Մեկ կողմ կը դառնայ եւ
գրուիւր շարժելով, արձնելով՝ հագին շեղի
հայնով): — Առ ի ցոյցս...

ՍՄԲՍ. — Բայց ոչի՛նչ չհաղորդեցիք
մեզի:

ԳԻՒՏ. — Ամէն ինչ պատմած եմ արդէն
Թագաւորին. սակայն գէթ իմ ներկայու-
թեանս չխօսուեցան այդպիսի բաներ՝ որոնց
մասին ոմանց կողմէ կոթողութիւններ ու
կասկածներ կ'ըլլուն. վասն զի իմ մեկնու-
թէս վերջ խօսակցութիւնները կարծեմ չա-
րունակուեցան:

ՎԱՐԴԱՆ. — Զեր մեկնելէն վերջ ժողո-
վը արդէն ցրուեր է, Տէր նախարար:

ԳԻՒՏ (փառանք) — Զեմ գիտեր,
բայց...

ՎԱՐԴԱՆ. — Բայց դատադատելիւ իբրեւ
բաղրուեր է:

ԳԻՒՏ. — Կենդանի՛ է Սատուած, դա-
ւադրագիրէն բնաւ տեղեկութիւն չունիմ,
և նոյն իսկ չեմ կարծեր որ այդպիսի ձեռ-
նարկ մը կ'ըստ ըլլայ իմ բացակայութեանս
փոխ:

ՎԱՐԴԱՆ. (Շեղծապաշտ) — Զեր
բացակայութեան փոխ... է՛հ, այո՛...
Բայց մեզի համար կարեւորը այդ չէ. իրո-
ղութիւնը այն է զոր խմբագրուած դատադ-
րագիր մը կայ այսօր մէջտեղ հայրենիքի
գէտ:

ԳԻՒՏ. — Է՛հ, կոտորածները չուտով կը

փարսալին. ժամանակը ամէն ինչ կը բերէ
կը բերէ:

ՎԱՐԴԱՆ. — Տարակոյս չիկայ:
(Սահակ Վարդանի աջ վրնէ որ շատ
առաջ յերթայ):

ԵՂԻՇԷ. (Սահակի) — Մենք ուշացանք,
Սրբազան Տէր. Զեր Սրբութեան ներկա-
յութիւնը անհրաժեշտ է այսօր հայրապե-
տանոցին մէջ:

ՍՍ.ԶԱԿ. — Այո՛. (խօսքն ուղղելով Ար-
սաշէսի՝ որ գլխիկոր եւ յուզուած վիճակ
մ'եր առած). Սիրելիդ իմ արքայ Սրտա-
շէս. (Արսաշէս յուսահատ շարժումով մը
Սահակի կը դառնայ) Իբրեւ եկեղեցւոյ
սպասուոր և պատասխանատու Ազգի՛
սպարաք կ'զգամ վերջին յորդոր-ինդիրքս
ընել Զեզ: Թողուցէ՛ք անպարբերութիւնը,
թողուցէ՛ք մանուածող երիտասարդական
և Զեր կոչումին անպատեւարներ ամէն մի-
տքեմ՝ Նուր արամբանութիւնը տեղի վրա
տայ գահալէժ բնաղդումներու: Մտածելով
ուեցէ՛ք լրջախոհութիւնով և, իմաստուն հե-
ռատեալութիւնով՝ զոհեցէ՛ք անձնական ա-
մէն ինչ ընդհանուրի շահին՝ որուն մէջ կը
կայանայ Զեր փառքն ու երջանկութիւնը:
Աստուծոյ դատ ունիմ նմա՛ն խաբար կայեալ
յանձնարարութիւն մը. այս օրերուն արեւ
թողեակցութիւն չունենալ Բիւզանդիոնի
հետ: Վերջին ծայր շրջանայեաց և զգոյշ
ըլլալու է: Մենք պիտի ընենք ամէն ինչ
որ կարելի է փճոյնելու համար ազգադաւ-
որ և է ծրագիր: Հայոց Թագին առաջին
պաշտպանն ու նախնաձախնդիրը Լ'ս եւ,
աշխատեցէ՛ք դնահատուկ բոլոր ճշմարիտ
Հայու նախնաձախնդրութեան այս ոգին:
Հայրենիքի կեանքը անհամաձայն գերու-
ղանց է անհատի մը կեանքէն. և անհատի
մը կեանքը թանկագին է՝ կրթ սն նուիր-
ուած է հայրենիքի մեծ կեանքի պահպա-
նութեան ու բարգաւաճումին: Տեսէ՛ք, մենք
Զեր անհատական կեանքով նպատակ ու-
նինք պահպանել մեր երկրին կեանքը:
Դիտեցէ՛ք արժեքնէլ Զեր կեանքը. հակառ-
ռակ պարտադրոյն ծոնք է Զեր պոռոտու-
խանութեան թիւերը Սատուոյ, մոթիոց և
նոյնիսկ Զեր խղճին առջեւ: Կը յուսամ
թէ անապատի մէջ բարբառ պիտի չըլլան

„**ՏԱՃԱՐԻ**”
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրուս
Գաւառաց » »	40 »
Արշասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

ԽՐԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմքարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Գարեգին Վրդ. Խաչատուրեան
5. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլեան
6. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
7. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
8. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլզճեան
5. Տ. Պօլոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Սնանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպլճեան

Տաճարի թէ՛ վարչական և թէ խմբագրական գործերուն համար պէտքէ դիմել
Զարմայր Բահանայ Կէզիւրեանի, Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցին, և կամ
Պոլիս, Զագմագճըշար, Յակոբեան խան, Օ. Արզուման Տպարան

ارمنيجه «داجار» غزني سي اداره خانه سي درسمادنده چاقاچيلر آغوبيان خان آرزومان مطبعه سي

Rédaction de la Revue «DADJAR»

Imprimerie O. Arzouman, Stamboul, Agopian Han, Constantinople (Turquie).